



ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55րդ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 21

14 ԱՊՐԻԼ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռէքէոս Պէրպէրեան

Քննական Ակնարկ մը

Առուեսագէտ Է. Արմեսաւոր Հայ Գերասաններ

Դիմակին Տակ

Իմ Պատասխանս

Կեանքս (Բանաստեղծութիւն)

Կատակերգութիւնք

Ռէքէոս Պէրպէրեանի Մանր

Պէրպէրեան Է. ՄԱՍԻՍ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

Է. ԿՈՂԲԱՅԻ

ՍՄԲԱՏ ԴԱԻԹԵԱՆ

ՄԻՀՐԱՆ ՌԻՂՈՒՐԼԵԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՄԱՄԵԱՆ

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

ՏԻՐԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԵԱՆ

1907

ԱՐԵՒԵԼՔ

Օրաթերթ ազգային, գրական և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝ Կ. Պոլսոյ համար 80 զրշ. գաւառներու համար 108 զրշ. և օտար երկիրներու համար 35 Փր: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանասօ փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրատարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններովը:

Հին ՕՐԵՐ. — ՊՈՒԷՏ ԽԱՉԱՏՈՒՐ ՄԻՍԱՔԵԱՆ ԵՒ ԻՐԵՆ ԺԱՄԱՆԱԿԻՑ ԻՄԱՅԱԿԱՆԻՆ ՎՐԱՅ ՀԱՅԵԱՑՔՆԵՐ. — Յ. Գ. Մ. — Այս կենսագրական բանասիրական գործը, հրատարակուած է Սագանեան տպարանէն՝ 140ի չափ էջերով, գրականութեան վրայ կարեւոր տեսութիւններով: Կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով. գին 7½ զրշ.:

ԼՈՅՍԻ ԵՐԵՍ ԿԸ ՏԵՍՆԷ

Մէկը՝ որ երկար ատեն տառապելէ ետքը ակուայի ցաւով՝ զայն քաշել կուտայ ճարտար առամետրոյժի մը, կամ արհեստական նուրբ միջոցներով լեցնել կուտայ ակուան, կամ գոռոցնի մէջ առնել կուտայ, ալ անգամ մըն ալ երեսը չտեսնելով ցաւին: Խնդիր է սակայն միշտ՝ լաւ, ճարտար ու արուեստին դադտնիքներուն գիտակ պառամետրոյժ մը գտնել: Այս նպատակին համար առանց վարանելու և գոհ մնալու մեծ ապահովութեամբ պէտք է դիմել հանրածանօթ առամետրոյժ Խաչիկ էֆ. Ժամկոչեանի, որուն համբաւը և կարողութիւնը վաւերացուած է ամէնէն: Դիմել Պահէ-Պարու:

ՀԱՒԱՔԱԾՈՅԻ ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄՆԵՐՈՒ ՍԻՐԱՀԱՐՆԵՐՈՒՆ. — Եթէ վաճառել ուզուած հաւաքածոյի նամակագրոյմներ ունիք, դիմեցէք Կ. Պոլիս, Ղալաթիա, Աւստրիական նամակատունին ետեւի կողմը եւ Գօմիսիօն Խանի կից՝ Տէմիր-խան, թիւ 25 հաւաքածոյի նամակագրոյմի վաճառական՝ Մարտիրոս էֆ. Արայճեանի, որ գոհացուցիչ գիներով կը գնէ: Եթէ նամակագրոյմի հաւաքիչ էք և կը փափաքիք ձեր հաւաքածոն ձոխացնել՝ դիմեցէք դարձեալ Մարտիրոս էֆ. Արայճեանի, որ դիւրամտելի գիներով կը վաճառէ՝ ամէն տեսակ հաւաքածոյի նամակագրոյմներ: Այս գործողութիւնները կը կատարէ թղթակցութեամբ ալ: Պէտք եղած ատեն Կ. Պոլսոյ յաճախորդներուն կ'այցելէ՝ նամակագրոյմներու գնման և վաճառման համար, եթէ կանխաւ յաճախորդներ իրենց հասցէն և փափաքը յայտնեն՝ 10 փարանոց քարթ-բօսդալով մը: Առանց որ և է փոխարինութեան նամակագրոյմներու գնահատում: Հասցէ՝ Մարտիրոս Արայճեան, Ղալաթիա, Տէմիր-խան թիւ 25 Կ. Պոլիս: Դիտ. — Նամակ գորդներէն կը խնդրէ իրենց հասցէն յստակօրէն գրել:

Ատանայէն կը դրեն. — «Առաջնորդ Տ. Մուշեղ Եպիսկ. վիճակային
գործերով Մէրսիսի գնաց: Հոն հեռագրով լուր առաւ որ Մարաշի առաջ-
նորդ Տ. Կորիւն վրդ. Ատանայի կուգայ, ուստի հոն մնաց. Մարաշ Զմին
Տ. Կորիւն վրդ. Քրանս. Սախաղին չողենաւով Մէրսիս հասաւ. չողե-
նաւին մէջ, Ս. Առաջնորդին փոխանորդութեամբ ընդունուեցաւ տեղին
հողեւոր հովիւ Տ. Շահէ վրդ. և ծանօթ ազգայիններու կողմէ: Տ.
Կորիւն վրդ. Տ. Մուշեղ Եպիսկ. և հետ Տարսնս ելաւ. Էնոյն օրը իրիկուան
չողեկաւքով Ատանա եկաւ. Տ. Կորիւն վրդ. և ընդ առաջ դացած էին
չողեկաւքով մինչեւ Քահեաօղլուի կայարանը Տ. Եղնիկ քահանայ և
Տեաքք Յարութիւն Պէտէլեան, Պողոս Եղիսիան, Միտաք Դաղաղեան,
Կ. Պոլսեցի Լեւոն Արմաղանեան և Առաջնորդարանի զեւանապետ
Քերովբէ Էֆ. Փափաղեան: Ատանայի կայարանին մէջ ընդունուեցաւ
Տ. Կորիւն վրդ. Ատանայի քահանաներուն դասէն և ուրիշներէ: Կառ-
բին Տ. Կորիւն վրդ. հետ նահանգին կուսակալ Վսեմ. Պահրի փաշային
այցելելով ներկայացուց Ն. Վսեմութեան, որ Սրբազանին հիւրը պատ-
շաճ պատուով ընդունեց ու շնորհաւորեց իր (Տ. Կորիւնի) Մարաշի
Առաջնորդութիւնը: Կէս ժամու չափ սիրալիր տեսակցութեան վերջը
մեկնեցան Ն. Վսեմութեան քովէն: Տ. Կորիւն վրդ. Շրթ., Կիրակի,
ու Բշ. օրերը բարի գալուստի շնորհաւորութիւններ ընդունեց ի մէջ այլոց
իրեն, ինչպէս Տ. Մուշեղ Սրբազանին այցելեցին Աւեսաբերի նորընտիր
խմբագիրը (որ Մարաշէն կուգայ ու Պոլիս կը մեկնի) Մր. Չէյնպըրս և
Վեր. Պետրոս Թօփալեան: Տ. Կորիւն վրդ. Սիւ մեկնեցաւ ուրիշ Մա-
րաշ հասած է»: — Ուրֆայէն բողոքներ հասած են Պատրիարքարան,
Թիւճարեան անուն քահանայական ընտրելի մը համար: Ժողովուրդը
ամէնէն աւելի կը բողոքէ այս ընտրելիին, կրօնական խնդիրներու
մէջ ունեցած խիզախ սկզբունքներուն համար, որով կը քննադատէ
եղեր Եկեղեցիի ծէսերը և կանոնները: Կրօն, ժողովը արդէն այս բողոք-
ներուն վրայ քննութիւն կատարել որոշած էր: — Խնուռէն կը դրեն մեղ.
— «Խնուռի կրթական վիճակը բաղդատմամբ Զ-Յ տարի աւաճումին
ինկած է: Օգտակար էր Դարա-Չօլանի վարժարանը, որ այս տարի դոց
մնաց, հողաբարձութեան նախանձօտ ընաւորութեան երեսէն: Ան ցարդ
Խնուսցիներուն նուիրած է 20 աւելի չըջանաւորաներ: Դպրոցին ուղ-
ղութիւնը Սանասարեանի կը հետեւի: Ուսուցիչներու մէջ կրթական մեծ
դեր կատարած է Էրզրումցի Վահէ Էֆ. Թօգաճեանը: Խնուս-Բերդի
վարժարանը բոլորովին անտարբեր չէ կրթականին: Այս տարի ան գոճա-
ցուցիչ վիճակ մը կը ներկայացնէ. կը վարուի մէկ տիրացուով և
մէկ ուսուցիչով մը. երկուքն ալ ժրսութեան մէկ մէկ տիրաւո-
րներ են: Հեռագրեմէ կը յաւանջանան Արօսի և Կէօլէնաիլի վարժարան-
ները: Արօսի վարժարանի աշակերտները իրենց դարգացման և ընթեր-
ցասիրութեան մէկ ազացոյցը տալու համար Մաւիսին լաժանորդա-
գրուելու փափաքեցան, քաջ համոզուած ըլլալով որ Մաւիս մեծապէս



ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԵՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55ԴԴ ՏԱՐԻ.ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 21

14 ԱՊՐԻԼ 1907

ՌԵԹԵՈՍ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ահաբեկիչ ու սրտակեղևը սարսուռ մը սաւառնեցաւ հոգիներու վրայ՝ մահուան գուժին իւրեր Ռէթէոս Պէրպէրեանի, որ ոչ եւս է։ Իր մահը կը ցնցէ ու կը վրդովէ միտքերը, տնհաւատաւի բայց անողոք իրականութեան դառնութեամբ, ակամայ մղելով համոզուիլ այդ աղէտին ստուգութեան դժկամակ ու ընդվզող միտքը մարդուն թէ՛ մեռած է ան ու կը բաժնուի աշխարհէն, հեռանալով իր սիրելիներէն ու սիրողներէն, հանգչելու համար յաւերժական անհուն Պարապին մէջ։ Իր կորուստին ցաւը ընդհանրական է և սիրտերու առթած սուգը տիրող, ջլատիչ, ինքնաբուխ։ Ամէն աչք արցունք մը ունի բիրին ծայրը, ամէն շրթունք հեկեկանքի մը դողը, և ամէն սիրտ ցաւի կոտտանքի մը ցնցումը։

Ընդհանրական կսկիծի ու անկեղծ, ինքնաբուխ սգակցութեան այս արտայայտութիւնները, — յարուցուած իր դադաղին շուրջը, գիտունէն մինչեւ ռամիկը, մեծահարուստէն մինչեւ է՛ն աղքատը, — պերճաբարբառ վկաներն են իր արժանիքին, իրր Մարգ, իրր Դրազտ ու իրր Դաս-տիարակ։

Պէրպէրեանի Մահով Հայ իմացական աշխարհը կը կորսնցնէ մէկը իր կարևոր անդամներուն, որ անմոռանալի գործի մը, արժանաւոր համբաւի մը և մաքուր անունի մը փառքը ունի։ Այս երբեակ արժանիքները, ձուլուած մէկ անձի ու մէկ հոգիի մէջ, դայն կը հանդիսացնեն

դէմք մը՝ որուն յիշատակը չի ջնջուիր հոգիներէ և որ կոչուած է փայլուն էջ մը գրաւելու իմացական կեանքի տարեգրութիւններուն մէջ :

Ժամանակակից մտաւորական գործունէութեան մէջ՝ Պէրպէրեան հոյակապ դէմք մըն է և իր դերը կը շեշտուի նշանակելի էջերով : Ամբողջ երեսուն տարի, անսպթաք ու յարատեւ, ան տքնած է մտաւորական շէնքի մը բարձրումին, անձնուէր ու կորովի կամքով՝ նուիրուած այդ իտէալին : Իր կեանքը օրինակելի տիպարն է անվհատ աշխատութեան, որ չկասիր պատահական խոչընդոտներէ : Իր դործը կը ճիւղաւորուի երեք ուղղութեան մէջ, հետապնդուած միեւնոյն կորովով, միեւնոյն եռանդով և անոնց մէջ փնտռուած վաստակը շահուած միեւնոյն յաջողութիւնով : Հոգիներու շնութեան, սերունդներու կրթութեան և զարգացումին նուիրուած Մարդ, ան եղած է նաեւ հեղինակաւոր Գրադէտ և արդիւնաշան Դաստիարակ : Իր մտաւորական ջանքերուն դերին ալդեցութիւնը կը տարածուի ամբողջ սերունդի մը վրայ, կրթած, դաստիարակած ու հասցուցած ըլլալով մեծ բաղմութիւն մը պատանիներու, որոնք եկած անցած են իր կրթութեան յարկէն, և զորս իրենց ընդունակութեան և համբերութեան չափով մարդած, դաստիարակած՝ յանձնած է աշխարհի, հոն մղելու համար կեանքի պայքարը՝ յաջողութեան յոյսերով՝ զորս իրենց մէջ բարոյական ու իմացական մարդուն բարձրացումը իսկ ներշնչած է իրենց : Առանց նիւթական արտաքին օժանդակութեան, լոկ իր անհատական ուժերուն ու միջոցներուն ապաստանած, հիմնել կրթութեան վաւարան մը, անանկ ատեն մը՝ ուր իմացական կեանքին պէտքը ա՛յնքան լքուած կը մնայ, և ուր ազգային կրթական չրջանակներ իսկ չեն մտածած նմանօրինակ ձևաւորիլի մը վրայ, զայն յաջողցնել և անոր յարատեւութիւնը ապահովել երկրորդական վարժարանի ծրագիրով՝ երկար ատեն միակը ըլլալով տեղին մէջ, յաջորդական սերունդներ մարդել կրթութեան ու դաստիարակութեան բովին մէջ, գործ մըն է՝ որուն արժէքը բարձր նշանակութեամբ մը կը շեշտուի, զոր իրականացնել ապահովարար արուած չէ հասարակ կարողութիւններու և որ պերճախօս խորհրդաւորութեամբ կը մասնանշէ անոր հեղինակը :

Ինք, ըլլալով միակ դաստիարակը մեր մէջ երկրորդական անհատական վարժարանի մը հիմնադրութեան գոյութիւնը քառորդ դարէ աւելի պահպանող, միակը չէ այդ ծրագիրը փորձող և հետապնդողներուն : Դուրգէն՝ Պէրպէրեանի Յորեկեանին արտասանած ճառի մը մէջ, անմեղ խոստովանութեամբ մը՝ որուն սիրելի է պարկեշտ անկեղծութիւնը, կը յայտարարէր. — «Ես ալ փորձեցի, բայց ես չյաջողեցայ» : Դուրգէն առաջինը և վերջինը չէ եղած այդ տեսակ փորձերու զասալիքներուն : Բայց Պէրպէրեան մըն է միայն՝ որ դուրգուրալի նշանաբանով մը յարատեւութեան ոգիի և աննկուն, կորովի կամքի՝ որուն գաղանիքը ինք ունէր, կրցած ու յաջողած է շարունակել իր սկսած գործը, մինչև վեր-

ջին չունչը դասալիք չըլլալով, մարտնչելով նոյն իսկ նիւթական և անտեսական ամէնէն վհատեցուցիչ պարագաներու դէմ, և իր Գործին, իր սիրական Գաղափարականին նուիրուած մարտնչումին, սգորումին մէջ՝ պատնէշին վրայ մեռնելով: Հո՛ր է Պէրպէրեանի արժանիքը, և մտաւորական գործիչի այդ մեծագործութեան մէջ կը յայտնուի ամբողջ Պէրպէրեանը, իր յոգնարեկ սիրելի ճակտին արժանի փառքի լուսապսակներով շրջանակուած:

Իր դաստիարակի դերին հետ զուգընթացաբար, իր արժանիքը կը չեղտուի կրկնապէս ուրիշ փայլով մը, որովհետեւ այդ դերը արգելք չէ եղած որ՝ իր դաստիարակի և կրթիչի կոչումին, ջանադրութիւններուն ու յաջողութիւններուն հետ՝ ինք չըլլայ նաեւ նոյնչափ արժանաւոր գրագէտ մը: Պէրպէրեան է՝ նաեւ կարող, բաղմամբուտ ու հաղուագիւտ գրագէտ մը, անոնցմէ՝ որոնք հեղինակաւորութեան մը իրաւունքը ունին, և որոնց գործը գրականութեան մէջ հեռք մը կը ձգէ, դեր մը ու ազդեցութիւն մը կ'իրականացնէ: Իմաստասիրող, զննող, տրամաբանող մի՛տք մըն է եղած Պէրպէրեան ամէն բանէ առաջ, զօրացած խոր հետեւութեամբ մը լեզուական ու գիտական բաղմակողմանի ծանօթութիւններու, որոնցմով իր խօսքը կշիռ մը, ազդեցութիւն մը, հեղինակաւորութիւն մը մարմնացուցած է միշտ: Հեղինակ բաղմաթիւ գիրքերու, Առաջին Տեւրեմէն մինչեւ Լյոնի և Յուշի և մինչեւ Դպրոց և Դպրութիւն, — դեռ նոր իր ձեռքը անցած՝ որուն հաճոյքովը կը հրճուէր վերջին օրերը, — կը թողուի դրագիտական գործ մը՝ որ մեր մասենագրութեան մէջ կարեւոր էջ մը գրաւելու կոչուած է, թէեւ այդ գործը, գեղեցկագիտական քննադատութեան մը ակնարկով դիտուած՝ ունենայ վիճելի ու տկար կողմեր: Այդ գործերը խաացումն են իր մտածումներուն, իր խորհրդածութիւններուն և աշխարհայեցողութիւններուն, գրական, իմաստասիրական, հրապարակախօսական և մանաւանդ դաստիարակչական հարցերու վրայ, ուր հետասիւզուած դերադոյն գաղափարականն է՝ ճանաչողութիւնը և ուսուցումը ի՛նչ որ Բարի, ճշմարիտ ու Գեղեցիկ է, Կեանքին, ինչպէս Հոգիին մէջ: Մինչեւ պաշտամունքի մը բարձրացուած այդ գաղափարականին ձգտումն է նաեւ որ արական մտասեւեուները եղած է իր դաստիարակչական գործունէութեան, ուր միտքերու մշակութեան իր դերին մէջ՝ նկրտած է իր խնամքին յանձնուած սաներուն հոգեւոր հայրութեան իր պաշտօնովը՝ անոնց կեանքը ուղղել և միտքը կրթել դէպի Բարիին, ճշմարտին, Գեղեցիկին մարմնացումը ձգտող նկարագրիին մէջ: Այդ գաղափարականը երազ մը չէ մնացած իրեն համար: Իր սաները և անոնցմէ դուրս ամբողջ թիւ մը պատանի սերունդներու՝ այդ նշանաբանին ծառայութեան կոչը լսած են իր շրթունքներէն տարիներով և դէպի անոր լուսաւէտ հանգրուանները ուղղած իրենց կեանքը: Պարկեշտ, խղճամիտ, աշխատող, անվհատ ու կոչումին սուր-

կօրէն նուիրուած դաստիարակի, ճշմարտասէր գրագէտի, անկեղծ մարդու, ընտանիքի տիպար պետի իր կեանքը՝ չէ՛ միթաղնած երբեք բիծով մը, տխուր արտօնով մը։ Եւ ի՞նչ է մարդու մը կեանքին կոչումը աշխարհի վրայ։ Իր իմացական կեանքի աշխատութեանը գերի, մարդկային պարտականութեան ձայնին հնազանդ, դործին ու պատասխանատւութեանը խղճաբխ մարդու բնաւորութիւնն է՝ որ բաղձանքը ներշնչած է իրեն ցանկալու սա վախճանին։ — «Բայց Լուսիւտար՝ պիտի չգլխայէր զիս երջանկութեան և դժբախտութեան ամենէն ամուր շղթաներովը։ Հոն, դպրոցական մեղուանոցին մէջ իմ ընտանեկան բջիջս պիտի կազմէի։ Անոր ծառերուն շուքին տակ պիտի պատրաստէի իմ բոյնս, անոր պարտէզներուն մէջ ամենէն երջանիկ ժպիտներս պիտի ժպտէի, ու, աւա՛ղ, անոր ողորուն վրայ ամենէն լեզի արցունքներս պիտի լայի...։ Լուսիւտար ա՛լ վերջին կայանս է անշուշտ, քրտինքներովս ալ, արցունքներովս ալ անոր հետ թրմուած խմորուած...»։

Իրա՛ւ, ա՛յնչափ աղետալի ու տարածամ կերպով բաժնուելէն ետքը՝ իր կեանքին, սէրին, հոգիին կէսն, սիրտին բոլոր խանդաղատանքովը սիրած, ամբողջ էութեամբը սրտած Զարուհիէն, որուն սուգը չկրցաւ մոռնալ երբեք, և որ խոր վէրք մը բացաւ իր կուրծքին տակ, մշտնջենապէս կոտտացող, ցաւատանջ ու բղքախչ, իրա՛ւ, Լուսիւտար իր վերջին կայանը եղաւ, իր քրտինքներովը, իր արցունքներովն ալ անոր հետ թրմուած, իր ետեւը ձգելով կարօտի ցաւով փղձկուն աչքերը մօրմէ ետքը հօրմէ՛ ալ որբ իր զաւակներուն և ահագին թիւը նաեւ իր հօգեւոր զաւակներուն ու համակիրներուն, որոնք հիմա աւելի՛ դառն արցունքներու յուզումովն ևն փղձկած իր ետեւէն։

Կը հանդէ՛ի ան յաւիտենական խաղաղութեան անէութեան մէջ, բայց կենդանի է իր դործով։

Նուիրական պարտք մըն է իր յիշատակը՝ և անունը յաւերժացնող մահարձան մը կանգնել իր հողակոյտին վրայ, բարձրացած պատուանդաններովը այն ընդհանուր համակրանքին և սէրին՝ որոնց արժանի ըրաւ ան ինքզինքը։

ԵՆՈՎ՛Ե ԱՐՄԷՆ

ՔՆՆԱԿԱՆ ԱՎՆԱՐԿ ՄԸ

Վերջերս հրապարակ հանուեցաւ «Պարզ Քարոզներ»^[1] անունով հատոր մը, Կրօն. Ժողովի անդամներէն Դեռնդ Վրդ. Դուրեանի կողմէ:

Մեր գրական հրապարակը, որ ժամանակէ մը ի վեր կրօնական գոյն մը առաւ, չնորհիւ Դպրեւանքի վարդապետներուն, կ'երեւայ տակաւին ժամանակ մը պիտի շարունակէ իր այս կրօնաբոյր միտումը, մասամբ լեցնելու համար այն սրաւով, զոր իմաստասիրական և գիտական ուսումնասիրութիւնները թողած են մեր մէջ: Չենք դարմանար, երբ դժուարութիւններէ փախչող մեր հակումը, շատ գիւրութիւնով կը գայթի դէպի թեթեւ բանաստեղծութեան և քարոզական հաւատակ տեղիքի կողմը: Գիտական և իմաստասիրական ուսումնասիրութիւնները ճիգի ու ջանքի կը կարօտին գրողին ու միանգամայն ընթերցողին կողմէն. հետադատութիւններու այդ սահմանադէին մէջ հիտութիւն մը անհրաժեշտ է գրողին և ընթերցողին համար: Այդ ջանքէն ու հիտութենէն հեռու, զիւրին գործերու զբաղումը, գեղատարար մեր գրողներէն շատերուն նախասիրութիւնը եղաւ: Գոնէ ընտանեկան կեանքի ուսումնասիրութիւնն ըլլար մեր քարոզիչներու գրիչին ու խօսքին նիւթը... Բայց այդ պարագային ալ անկեղծութիւն մը անհրաժեշտ էր. մեր եկեղեցականութեան մէջ գոյութիւն չունեցող այդ ուժը, թերեւս զիւր չգար ոչ գրողին և ոչ ալ ընթերցողին, որոնք՝ հաւատարմաւէս՝ զիրար չոյելու,

[1] «Պարզ Քարոզներ»ու գրախօսը, հեղինակաւոր ու ծանօթ գրագետ մը՝ որ Ե. Կաղ. Բաղի կը ստորագրէ այս անգամ, Դեռնդ Վրդի գործը կը վերլուծէ կրօնական տեսակէտէ մը, ողջամիտ ու անկեղծ հայեացքներով, Համահայկեան հրատարակելով իր յօդուածը՝ կ'ուզենք անելցնել թէ՛ մենք մեր մասին չենք հասկնար նոյն իսկ քարոզի գիրքի մը հրատարակումը՝ իբր քարոզացոյցի ու կրթիչ միջոց ժողովուրդին իմացական ու հոգեւոր կեանքին: Քարոզը եկեղեցիին մէջ և բնի վրայ, Անկէ դուրս անիկա կ'ապահարկուի ամէն արժէքէ և ո՛ր և է անմիջական ու իրական օգուտ չկրնար ունենալ: Քարոզը սիրելի և ունկնդրելի է միայն՝ երբ կը ներկայանայ ժողովուրդին՝ պերճախօսութեան, ներշնչումի և բեմական տպաւորութեան այն ազդեցութեամբ՝ ո՛ր միայն կը փնտռուի իր հրապոյրը: Այդ արժանիքներէն մերկացած՝ մեռած տառ մըն է ան գիրքի էջերու վրայ, իր չոր, անազգեցիկ, անհրապոյր, յուզելու անկարող և քիչ մըն ալ տախիկ վիճակին մէջ: Ասոր համար է որ անհասկնալի է փութկոտութիւնը այն եկեղեցականներուն՝ որոնք չորս քարոզ խօսածնուն պէս՝ իրենց առաջնակարգ մտահոգութիւն կ'ընեն զանոնք գիրքի մը մէջ ամփոփել, իբր թէ եկեղեցիին մէջ չկ'առնալով՝ գիրքերու մէջ ալ քարոզ մտիկ ընելու սահմանուած ըլլար ժողովուրդը լոկ և մեր մատենագրութիւնը լոկ քարոզագրութեան մէջ կայանար: Չեն կրնար եկեղեցագիտական ուրիշ աշխատութեան մը նուիրուիլ անոնք, երբ գրականութիւն ընելու ծափելի փափաքովն են եռանդաւորուած: Մասնաւորելով «Պարզ Քարոզներ»ուն, չենք հասկնար նաև թէ, ժողովուրդին հոգեւոր բարիքին նուիրուած գիրք մը ի՞նչ արդարացումով կրնայ 12 դրշ. գինի առգին բեռ մը ըլլալ անոր՝ երբ մօնաւանդ Քարոզագիրքին հրատարակութեան ծախքը... վճարուած ալ է կանխաւ: Այդպէսով հոգեւոր բարիքը՝ Ո՛վ ծախուած բարիքը, Խմբ. Ծախ.

չողոքորթելու վարժ, պիտի չկրնային թերեւս հաշտ ապրիլ իրարու հետ
այն միեւնոյն գետնին վրայ, ուր կեղծուած կրօնքը հաւասարապէս գո-
հացում կուտայ ամէնուն :

«Պարզ Քարոզներ»ու հեղինակ վարդապետը, իր յառաջաբանին մէջ
կ'ըսէ թէ «այս քարոզները կը պարտիմ մասնաւորապէս... աշխարհ-
հոչակ քարոզիչներու՝ Սպըլինի, Ֆարրարի, Վալենթի և Բիրսիէի քա-
րոզներու և ճառերու ընթերցումներու» : Թէ այդ հեղինակներէն ո՛րքան
օգտուած է ինքը, պիտի կրնանք երեւան բերել մանր բաղդատութեամբ
մը այդ մեծանուն հեղինակներուն հետ : Առանց այդ բաղդատական ու-
սումնասիրութեան ձեռնարկելու առ այժմ, ըսենք միայն, թէ «Պարզ
Քարոզներ»ու Հեղինակը, եթէ ումանց մեկնողական մեքոսէն և ուրիշ-
ներու նիւթերու քաժանութենէն օգտուած է տեղ տեղ, և ուղած է նմա-
նիշ անոնց, դժբախտաբար մոռցած է որգեգրել կամ իր մէջէն ստեղծել
Վալենթի թափանցող, պարզ ու միեւնոյն ժամանակ վերլուծող ընկերա-
բանական քննասիրութիւնը, Սքըլլընի humeurը, Ֆարրարի բարեպաշ-
տիկ քննադատութիւնը և Բիրսիէի կրօնական ճարտարխօսութիւնը :
Մէկ խօսքով քարոզիչ վարդապետին հետեւականութիւնը՝ այդ մեծ
ղրիչներուն՝ աւելի արտաքին ու ձեւական նմանողութեան մը մէջ կը
կայանայ, քան հոգեկան ներշնչումին մէջ, որ գլխաւոր և անհրաժեշտ
պէտքն է բոլոր անոնց, որոնք խօսիլ կ'ուզեն ժողովուրդին հոգիին
հետ : Այս պարագային չկրցինք մենք ըմբռնել, թէ ի՞նչ բանէ՝ առաջ
եկած են Տիրայր վարդապետի ա՛յն յուզմալից գրուածքները, որոնք
հրատարակուեցան «Լոյս»ի 10րդ թիւին մէջ, անձնական նամակի մը
ձեւով :

Մեզի համար, սակայն, կարեւորութիւն չունին «Պարզ Քարոզներ»ու
մէջ գործածուած ոչ չափազանցութիւնները, ո՛չ շողմանքի ուռուցիկ
ձեւերը, ոչ կրկնութիւնները, և ո՛չ ալ ա՛յն աղօթքները, որոնց կիրար-
կումը հետեւողութեան մը արդիւնքն է լոկ : Ամէն գործ ու գիրք կրնայ
իր ընթերցողները ունենալ, քանի որ կարելի չէ ժողովուրդի մը ճա-
շակը, գրական ու կրօնական ըմբռնումները ո՛չ մէկ ժամանակ և ո՛չ մէկ
միջավայրի մէջ՝ միեւնոյն գծի վրայ քալած տեսնել :

Այս «Պարզ Քարոզներ»ու հատորին մէջ կէտ մը միայն կայ, որուն
կ'ուզեմ անդրադառնալ : Քարոզիչ վարդապետը իր յառաջաբանին մէջ
կը շեշտէ, թէ 1. Այդ քարոզները գրած է իր խորունկ համոզումին և
հաւաստիին շունչովը. 2. Այդ քարոզներու խմբագրութիւնը կը պարտի
«գլխաւորաբար և ընդհանրապէս» Ս. Դրքի և Աւետարանի ուսումնա-
սիրութեանը : Եթէ Հեղինակին այս երկու յայտարարութիւնները գրքին
մուտքին վրայ արձանագրուած չըլլային, ո՛չ մէկ դիտողութիւն պիտի
ուզէինք ընել : Բայց երբ գրքին այդ էջը բաղդատութեան կը դնենք
գրքին վերջին քարոզի նիւթին հետ «Երանեալ Սուրբ Մայրն», այն

ատեն պղտիկ տարակոյաներ կ'ունենանք ըսելու, թէ մի՛ գուցէ Քարոզիչ վարդապետը, կարգ մը գիրքեր չփոխած ըլլայ Ս. Գրքին և Աւետարանին հետ: Տեսէք ինչ կ'ըսէ Քարոզիչ Հայր Սուրբը, խօսելով Աստուածածնայ մասին. «Հաւատացեալ ջերմեռանդ քրիստոնեայն անոր բարեխօսութեամբ միայն պիտի կրնայ մերձենալ Աստուծոյ շնորհաց և անհուն զօրութեան. ճառապետ մեղաւորները առանց քարեխօսութեան ու միջնորդութեան Ս. Աստուածածնայ երբ մերձենան Քրիստոսի, իբրեւ գերադրութեամբ Անոր երեսէն պիտի մերժուին» (էջ 306):

Մեր կողմէն ստորագծուած՝ Հեղինակին այս տողերը իրա՞ւ ներշնչումներ են Ս. Գրքի և Աւետարանին: Իրա՞ւ է թէ ամբողջ Քրիստոնէութեան փրկութիւնը ՄԻԱՅՆ և ՄԻԱՅՆ Աստուածածնայ բարեխօսութեամբը պիտի իրագործուի. իրա՞ւ է, թէ առանց այդ բարեխօսութեան պէտքը զգալու ուղղակի Շնորհաց աղբիւրին, Քրիստոսի դիմած ատեններն «իբրեւ դերադրութեամբ Անոր երեսէն ի բաց պիտի մերժուին»: Այս ուրեմն ինչո՞ւ Քրիստոնէութեան հրաշունչ Առաքեալը, Ս. Պօղոս կը գրէ Տիմոթէոսի. «Մէկ Աստուած մը կայ ու մէկ միջնորդ՝ Աստուծոյ ու մարդոց միջեւ, Քրիստոս Յիսուս մարդը, որ իր անձը ամէնուն տեղ փրկանք տուաւ (Ա. Տիմ. բ. 5—6): Եթէ Ս. Ածածնայ միջնորդութեան դիմում չընողները Քրիստոս իբր գերադրոյ՞մ պիտի մերժէ, ինչո՞ւ ուրեմն Ս. Պօղոս, որ Քրիստոնէութեան երկրորդ հիմնադիրը եղաւ, Գաղատացեաց գրած ատեն զՔրիստոս իբր միակ ՄԻՋՆՈՐԴ կը ներկայացնէ հոգեւոր փրկութեան ծարաւի սրտերուն համար (Գաղ. Գ. 19—20): Եբրայեցեաց թուղթին հեղինակն ալ, ով որ ալ եղած ըլլայ, միեւնոյն չունչով, հաւատքի ու խորունկ համոզումի միեւնոյն եռանդուն յոյսով կը յարէ, թէ «լաւագոյն խոստումներով հաստատուած լաւագոյն ուխտի մը միջնորդը» կամ «յաւիտենական ժառանգութեան հաւատացեալներուն, նոր ու խորին միջնորդը Քրիստոս է միայն (Եբր. Ը. 7 թ. 15 և ԺԲ. 24): Եւ արդեօք, նորէն Ս. Պօղոսի կենդանի ու կենդանացնող հաւատքին ու ընդունած ներշնչութիւն համաձայն, մեր միակ բարեխօսը Քրիստոս չէ՞ (Հռովմ. Ը. 34): Եւ արդեօք Եբրայեցեաց թուղթին քարոզած հաւատքին համաձայն, յաւիտենական Քահանայապետը և միշտ կենդանի Քրիստոսը չէ՞ հաւատացեալներու բարեխօսը (Եբր. Ե. 23—25): Եւ արդեօք այս չէ՞ սիրոյ վարդապետին, Ս. Յովհաննու ըմբռնումը և քարոզածը (Ա. Յովհ. Բ. 1—2):

Ս. Գրոց այս յայտնի ճշմարտութիւնները, քրիստոնէական ըմբռնումին մեծաբարբառ յայտնութիւնները ըլլալէ վերջ, իրաւ որ մարդ բաւական մեծ *loupet* ունենալու է մէկ կողմէն դրելու թէ «քարոզներս գլխաւորաբար և ընդհանրապէս Ս. Գրքի և Աւետարանի ուսումնասիրութեան վրայ ձեւուած են, և անոնցմէ ներշնչուած» և միւս կողմէն չտեսնել ձեւացնել այն արտակարգ հակասութիւնը, որ գոյութիւն ունի

այդ քարոզչութիւնն և Ս. Գրոց և Հայ Ս. Եկեղեցիի կրօնական ըմբռնումներուն միջեւ:

Մենք չենք պնդեր, թէ այդ տողերը Քարոզիչ վարդապետին «խորունկ համոզումին և հաւատքին» արդիւնքը չեն, կասկածելու իրաւունք ալ ունենալով հանդերձ մեր շատ մը եկեղեցականներու հաւատքի յայտարարութեանը և համոզումի անկեղծութեանը մասին. բայց այս չնչանակեր, թէ «Պարզ Քարոզներ»ու Հեղինակին կարծիքն ու համոզումը անպատճառ համաձայն եղած ըլլան Ս. Գրոց ու մանաւանդ Նոր Կտակարանի վարդապետութիւններուն և մեր Հայ Ս. Եկեղեցիի ըմբռնումներուն հետ: Վերեւ մեր նշանակած Ս. Գրական հատուածները խուսափողութեան ո՛ր և է արահետ կը փակեն վարդապետին առջեւ և չեն թողուր, որ տարապարտօրէն ընդունելի ընեն այդ օտարամուտ և լատինամարտ ըմբռնումները մեր Եկեղեցիին մէջ, ուր իրեն նման շատեր խաբուելով Նարեկացիի բանաստեղծական բառերու կուտակումէն, որոնց չէ կարելի վարդապետական (dogmatique) իմաստ մը տալ, հետզհետէ կը միտին Ածածնայ ընծայել դիրք մը, զոր չունին, դեր մը, զոր ինքն իսկ պիտի մերժէր, և ասիկա տեղի կ'ունենայ Դեռնդ վարդապետի նման քարոզիչներու առաջնորդութեամբ: Արդեօք կրօն. ժողովը պիտի ներէ՞ր այս տարօրինակ երեւոյթիւն և ինքն ալ պիտի կրնար վաւերացնել, թէ ՄԻԱՅՆ ԵՒ ՄԻԱՅՆ Ածածնայ բարեխօսութիւնով պիտի փրկուի Քրիստոնեան և անոր բարեխօսութեան զիմում չընողները իբրեւ զերազրուծ Յիսուսի երեսէն պիտի մերժուին:

Այն պատէն, ինչ պիտի ըլլայ արդեօք հոգեկան վիճակը ա՛յն բերաւոր Հայերուն, որոնք հետեւելով Հայ Ս. Եկեղեցիի ուղիղ վարդապետութիւններուն և բնդունելով հանդերձ Մարիամի զերազանց մայրութեան բացառիկ դիրքը, աշխարհի Մայրութեան պատմութեան մէջ, առանց իրենց խղճին խորը տարակոյսի ստգտանք մը գտնելու, իրենց հոգիի բովանդակ ամբարձումով արտաստնուած ու աղօթած, հառաչած ու պաղատած են Հայ Եկեղեցիի գոյութեան ու ներշնչումի աղբիւրին, միշտ բարեխօս ու միշտ կենդանի Յիսուսին, անկէ իրենց մեղքերուն թողութիւնը, իրենց կիծատ քայլերուն ուժը և իրենց վիրաւոր ու կսկծուտ հոգիին մխիթարութիւնը գտնելու հաստատուն յոյսով:

«Պարզ Քարոզներ»ու Հեղինակը կատարեալ ինքնավստահութեամբ կը յարէ թէ «յամենայնի վստահ ըլլալով, թէ սոյն աշխատութիւնս կրնայ հանրութեան բարոյականին օգտակար ըլլալ և անոր հոգեւոր զարգացման նպաստել, ի լոյս կը հանենք զայն»: Մենք հեռի հեղինակին այդ քիչ մը խոչոր ու մեծամիտ վստահութենէն, առանց անկէ վարակուելու, և առանց աչքէ վրիպեցնելու Նոր Կտակարանի և Հայ Եկեղեցիի դաւանութիւններն ու ըմբռնումները, պարզապէս իբրեւ անաչառ ընթերցող մը, չենք կրնար ընդունիլ, որ Հայ Եկեղեցիի զաւակները իրենց հաւատքի ճշմարիտ ուղղութենէն մոլորեցնող քարոզ մը բարոյական օգուտ և հոգեւոր զարգացում կարենայ պարգեւել հանրութեան մը, որ կը սիրէ լսել ճշմարտութիւնը, անկեղծութիւնը և ուղղութիւնը, Աւետարանի շունչովը կենդանացած:

Ե. ԿՈՂՈՍԻ

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ ԵՒ ԱՐԶԵՍՏԱԻՈՐ ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆՆԵՐ

Հրապուրիչ ոճի մը անուշուժիչներուն հետ խառն՝ նիւթերու շահեկանութիւն մը կ'ընծայեն «Օրուան Նշմարներ»ը, զորս «Գամէր» շաբաթէ շաբաթ «Արեւելք»ի մէջ կը հրատարակէ այնքան վարժ ու փորձ կերպով համեմելով անցեալը ներկային հետ, ապրուած կեանքը մոռցուած յիշատակի մը հետ և մանաւանդ հին օրերու այդ յիշատակներէն՝ անոնք որ յաճախ զրական-զեղարուեստական նիւթերու շուրջը կը դառնան, մասնաւոր հաճոյքով մըն է որ կը կարդացուին։ Ասոնց կարգէն պիտի յիշեմ իր ծատերական կեանքի վերյիշումները, որոնք իբր նախասիրական նիւթեր, յաճախ կ'երեւան, երբ առիթ կ'ունենայ խօսելու մեր նոր դերասաններուն կամ անոնց նորագոյն մէկ խաղին վրայ։ Իրաւ է որ աւելի՛ տխուր շեշտ մը, մեղամաղձիկ «նօթ» մը կայ անոնց մէջ, երբ կը խօսի մեր առաջնորդներու կրած զրկանքներուն ու տխուր կեանքի մը զրուածներուն վրայ, իայց այդ յիշատակները տեսակ մը անուշուժիչով համեմուած՝ իրենց դառնութիւնը ամօքուած՝ աւելի հրապուրիչ կը դառնան, ինչպէս վերջին անգամ Աղամեանի կեանքէն երկու անէքտոմները, Զաւրաստի, Սիսակի և Թրեանցի մասին ակնարկները, որոնց առթիւ հարցում մը կ'ուղղէր թէ մեր տաղանդաւոր այդ արուեստագէտները, բացի բեմական տրուեստէն, ունէին ո՞ր և է արհեստ կամ զբաղում, իբր ապրուստի միջոց։ Այս հարցասիրութիւնը առիթ կուտայ ինձի՝ ծատերական պրպտումներէս բաղուած մը ընելու, իբր պատասխան այդ հարցումին, որ անկարելի է մեր դերասաններու կեանքին տեսակէտով։ Այս քանի մը տեղեկութիւնները Թրեան առիթ մը ըլլան որ ուրիշներ ալ՝ իրենց կարգին՝ լոյս մը բերեն իրենց ծանօթ դերասաններու կեանքին ու բեմէն զուրս անոնց ունեցած զբաղումներուն ու զօրմունեւութեան վրայ։ Ու, որոշ կարգով մը սկսելու համար, յիշենք թէ՛

Ա.Գ.Ա.ՄԵԱՆ (1849—1891) մեր հռչակաւոր ողբերգուն, նշանաւոր էր իբր

նկարիչ և բանաստեղծի իր երկու նկարները՝ յախճապակիէ պնակներու վրայ սեւագրուած՝ Գատը Գիւղի Մխիթարեան վարժարանի սրահը կը զարդարեն։

Ա.ՃԷՄԵԱՆ ՅՈՎ.ՀԱՆՆԷՍ (Երկրորդը[*] 1833—1895) նշանաւոր քննող, խմբագիր և երաժշտական՝ Գրոնիկագիր եղած է Մայրաքաղաքիս ֆրանսերէն թերթերուն, ինքն է որ մասնակցած է Զուխանի կազմակերպած Օրերայի խումբին (1873), Թրեանցի, Նալեանի և Օր. Շաղիկի հետ՝ որուն հետ ամուսնացած է։

Գ.Ա.ԲԱՐՃԵԱՆ ՄԻՀՐԱՆ (1851—1906) նախապէս ամաթէօ-դերասան, ուսուցչութիւն կ'ընէր Ենի Գալու, (Հմայեակ Եպիսկոպոսի բարոյչութեան օրով) խաղիւղ, Պալքէսիւր, Ռոտոսթօ, Լալին։

Գ.Ա.ԲԱՐՃԵԱՆ ԵՐԱՆՈՒՀԻ հիմա իշխանուհի (Արդուժեան Աղեքսանդր Երկայնաբազուկ), ժամանակ մը Եգիպտոսի մէջ «Վհատած» բեմէն, սկսած էր կար կարել, մօտիսդուժեան առպարէզը ընդդիմելու համար իր յոգնած տարիքին մէջ» (1897)։

ՅԱՆՆԻ (ծն. 1834) որ ծատրոնի սկզբնական շրջաններուն երեւցած է իբր զերասանուհի. հիմա լուացարարութիւն կ'ընէ։

Է.ԲԵՇԵԱՆ ՍՏԵՓԱՆ (1834—1901) ծարգման, զրազիր և շոգենաւային ընկերու. թեանց գործակալ եղած է։

ԹՐԵԱՆՅ ԴԱՒԻԹ (1840—1899) իր ամբողջ դերասանական կեանքի տեւողութեան մէջ, ամէն անգամ որ բեմական ճախողութեան հանդիպած է, նկարչութեամբ ապրած է, — ճիւղ մը որուն մէջ մասնաւոր յաջողակութիւն ունեցած է՝ նոյնիսկ զեռ

[*] Մեր դերասաններուն մէջ ունիմք Յովն. Ամեմեան առաջինը, (1828—1872) իբր ողբերգակ՝ որ խաղացած է 1857ին սկսեալ, Արմենակ Հայկունիի սեփականութեան տակ, Գաւրգիւղ, Մօսա. եւ անկէ ետքը, Վարդովեանի խումբին մէջ. Սերովրէ Գեղեցեանի ֆեսայրն է։

բեմական կեանքը չընդգրկած: Վենետիկէն դարձին թրեանց Արքունի ֆողերանոցին մէջ պաշտօնի կը մտնէ՝ կերպասեղէններու նկարները գծելու համար: Իր կեանքէն ուշագրաւ ճանէքտածներ կը յիշուին այս մասին:

1864ին, Իզմիրի մէջ տնգործ և անփող մնալով՝ թրեանց ձեռք կ'առնէ մատիտ ու վրձին և իբրեւ նկարիչ իր գիրքը կը շինէ լուսանկարիչ Ապտուլահ Եղբայրներու Ար. հետանոցին մէջ: Դարձեալ, 1871ին, Նոր Նախիջևանի մէջ, թատերական փորձը անյաջողութեան մատնուելով՝ թրեանց նորէն պէտք կ'ունենայ նկարչութեան դիմելու: «Ներկայացաւ Նախիջևանի այն ժամանակուայ բաղաբազուխ Պ. Պլտնիկովին, յայտնեց խմբի թշուառ վիճակը և իւր Նոր շինուած տան մէջ աշխատելու ցանկութիւնը:

«— Ի՞նչ գործ կարող ես կատարել, հարցրեց բարեսիրտ Պլտնիկովը:

«— Զեր տան պլան ու պատալօլը (==առաստաղն ու պատերը) կը նախշեմ, պատասխանեց թրեանց:

«— Փորձեցէք տեսնեմ, եթէ հաւանեմ, ձեզ գործ կուտամ:

«Միւս օրը թրեանց վրձինը ձեռք առաւ: Երկու շաբաթից յետոյ Գաղաթաղի տան սրահի առաստաղը զեղեցիկ նկարներով զարդարուած էր: Փափագեան և Աղամեան՝ բարձրացած ներկարար թրեանցի եռօտանի տանդուխի վերայ՝ օգնում էին նրան: Այդ միջոցին՝ Նախիջևանում գտնուող բոլոր ղեկաւորներին ապրեցնում էր թրեանց իր վրձինի շնորհիւ: («Պարագայ» որ կրկնապէս պատուարեր է թրեանցի համար իբր. արուեստագէտ և իբր. բարեսիրտ մարդ):

ԹՕՍՊԱՅԹԵԱՆ ՏԻՂԱՆ (1852)
Ժանօթ երիտասարդ սիրահար ղերասանը, 1882ին Պրուսա իր կնոջ հետ քօհաճիլէի խանութ բանեցնելէ ետքը, ասպարէզէն հեռանալուն թուականէն սկսեալ Սինկէրի Ընկերութեան գործակատարութիւն կ'ընէ գաւառներու մէջ:

ՀԷԼԱՆԵԱՆ ՌՈՒՐԻՆ (հիմա Տոքթոր) 1868—69 թուականներուն, բժշկական ուսանողութեան շրջանին, միեւնոյն ժամանակ Իսկիւպար՝ թատրոնին մէջ դերասանութիւն կ'ընէր՝ նշանաւոր յաջողակու:

Թիւն մը ցոյց տալով ողբերգական թէ կատակերգական սեւերուն մէջ,

ՄԱՂԱՔԵԱՆ ՊԵՏՈՍ (1826—1891), Այս նշանաւոր արուեստագէտն ալ, ոչ նուազ ճարտար կօշկակար եղած է:

ԶԱՓԱՍՏԱՆԵԱՆ ԵՐԱՆՈՍ-ՄԻՐԱՅԷԼ (1846—1907), Ողբացեալ կատակերգուն, եղած է ժամագործ, առամասբոյժ, ղեղագործ, կեղծամ շինող և նոյն իսկ կարուակ:

ԶԷՐԱԶԻ ՅՈՎՍԷՓ, այս փայլուն գոմիգ ղերասանը Ապտուլահ լուսանկարչատան մէջ ուրբուճեալ եղած է:

ԶԻՒՆԿԵՐԵԱՆ ԱՐԱՔՍԻՊԵՍՏՈՍ (1852—1882) որ անձանթ մնացած արուեստագիտունի մըն է, իբր. ղերասանունի փառաւոր անցեալ մը ունի. զբաղած է ժամանակ մը ձեռարուեստով և բաւական յաջողակ մօտիւսմ-ղերձակունի եղած է:

ԶՈՒԽԱՅԵԱՆ ԱՆՆԻԿ (Տե'ս վերը) Տիգրան Թօսպանեանի կինը:

ՀԱՅԱՅԷԼԵԱՆ ՍԻՄՈՆ (Հանգուցեալ Տոքթորը) իր երիտասարդ տարիքին՝ ուսանողական շրջանին ո'չ միայն ղերասան եղած է իբր. ամաթէօն, այլ նաև ունի շատ մը թատերգութեանց թարգմանութիւններ, ինչպէս Մաննէ Գրիմոյի թատերգը, Թափառական Հրեայ թատերգը (հեղինակ՝ Ատրիէն Լամայօ):

ՍՈՒՐԷՆԵԱՆ ՊԱՂՏԻԿ, որ 1880էն 1886 ղերասանութիւն և միեւնոյն տունն առեւտրական գործեր ըրած է:

ՎԱՐԴՈՎԵԱՆ ՅԱԿՈԲ (1840—1898?) ղերասանական ասպարէզը մտնելէն առաջ, ստսէֆեաթ ոսկերիչ եղած է. իր թատերական կեանքի ելեւէջներուն միջոցին ալ եղած է՝ սկիզբները՝ զրազիր Պալլզհա: Նէի վարչութեան մէջ, յետոյ զարդանկարիչ ձեփիչ և նոյն իսկ ծիախտոր տոպի շինող (1878էն 1882):

ՎԱՐԴՈՎԵԱՆ ԽԱԶԻԿ (1852—1896) ղերասան և ղեղագործ: Ունինք նաև զրաշար-ղերասաններ, կազմարար-ղերասաններ, մանրավաճառ-ղերասաններ, և այլն:

Ահա մեր ղերասաններու կեանքէն բանի մը քաղուած նօթեր, որոնք զուրկ չեն շահե:

կոչումը եւ դերը լուսաբանական հրապարակութիւններու:

Մեր մտքին Մարեան Նուագահանդէսի հարցը փակելէ եւ իր բացօրո՞ւ ելլին մէջ ընթերցող հասարակութեան ներկայացնելէ ետք, ստացանք հետագայ յօդուածը Տիրան Աստուածասուրի, որուն մէջ Բանի անգամ երեւցած ըլլալը կը յիշենք քերքերու մէջ. երգիծական յօդուածներով, ուր ան գրական ու գեղարուեստական դէմքեր ու իրողութիւնները կը վերլուծէ առժամի հեղեան. Բով մը անոնց գուարնացուցիչ կասկածներգրականութեան: Իր այս յօդուածն ալ, գրուած յաջող պատկերացումով Մարեան Նուագահանդէսին գուարնալի կողմերուն, կը հրաշարակենք, արձագանգ եղած ըլլալու համար ի՞նչ ալ խորհրդածութիւններուն:

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Շատերուն մտածելո՞ւնն է «սարքեր»ը, ուրիշներուն միտքը կը չարչարէ, օրինակի համար, օրուան սնանկութիւնները, ես, իմ առանձնարանիս մէջ մեկուսացած՝ կատակերգութիւններով կը գուարնանամ:

Դեռ ո՛չ մէկ նիւթ ինծի այնքան հետաքրքրութիւն պատճառէր է, դեռ միտքէս չեմ անցուցած գրական դէմք մը ուսումնասիրել, կամ երկինքը նայիլ, ոտանաւորի մը նիւթ գտնելու համար. միակ մտահոգութիւնս եղած է կատակերգութիւնը, ըլլայ ան գրական կամ գեղարուեստական:

Պահ մը չիմ սովորական վերնագիրէս անկախաբար՝ կը ստիպուիմ խօսելու երաժշտական կատակերգութեան մը վրայ, որ կը խաղցուի և ինծի անանկ կուգայ որ պիտի շարունակուի ալ, մինչեւ քի կատարած աշխարհիս:

Ձիդերս ոտք ելան, ինչպէս կ'ըսեն, Թէեւ շատ ալէկ գիտեմ որ չիդերս ո՛չ ոտք ունին, ո՛չ ալ գլուխ. խօսելու ձեւ մըն է ստիկա, զոր մարդ կը գործածէ իր ջրագրողութեամբ վայրկեաններուն:

Մարեան անունով անձ մը կայ եղբւր, Օր

մը, կ'որոշէ իւնիօնի մէջ նուագահանդէս մը տալ:

Այսքան արուեստագէտներ փայլուն նուագահանդէսներ տարած են, Թոմարնէն սկսեալ մինչեւ Ֆլորիցէ. ինք ինչո՞ւ չտարբէր, ինք որ ամէն երաժիշտ ծախու կ'առնէր...

Այլ կը գործադրէ:

Հիանալի կերպով յաջողեցաւ, կ'ըսէ «Պետիկ» մը անդիէն, Եւ «Մարեանի պէս հանձար չէ ունեցած Հայոց ազգը» կ'աղաղակէ լրագիրի մը մէջ:

Ասորիէն խարտեալ օրիորդ մը, որ պէտքերով ծնած ըլլալուն վրէժը կը լուծէ զէշ կարուած շրջագրեստի մը մէջ փաթտուելով, և որ իր մարմինին առնական կոշտ զիծերը երեւան կը հանէ աւելի, քան զինքը կը բողածակէ, Մարեանը երկինքին է՛ն վերի տառիմանը կը հանէ, ըսելով որ մենք այդ գերբնական տաղանդին արժանի չենք, ո՛հ, անիկա մեծ մարդ է:

Հիմակ ալ ուրիշ օրիորդ մը, Ալիս Մանուկեան անունով, ինքզինքը կ'ուտէ, կը պատուաւորի հասկնելու համար Թէ Մարեան պիտի գերազանցէր Բականինին: Եթէ անոր ժամանակակից ըլլար, և Թէ... դեռ ուրիշ շատ մը բաներ, իր Թէ քղանցքին վրայ կոխող մը ըլլար:

Տարօրինակ ըլլալու համար անպատճառ Եանքի ծնելու չէ մարդ, Կը բաւէ կոյր հաւատք մը և ինքնապաշտպանութեան ամէնէն անմիտ, ծիծաղելի միջոցները յղանալու չափ ուղեղ ունենալ: Անկէ անդին դիւրին է յաղթանակը? տանիլը:

Մասիս խմբագրապետը սկիզբէն ի վեր ճշմարտութիւն մը մէջտեղ կը դնէ և բա՛ն մը կ'ըսէ: Մարեանի նուագահանդէսին յաջորդող շաբաթ օրն իսկ իր Թերթին մէջ գեղարուեստական քննադատութիւն մը հրատարակեց, ժողովուրդին ճաշակը կասկածի չենթարկելու և ճշմարտութիւնը խօսած ըլլալու համար:

Ինք ուրիշներուն պէս chantageին անգոյն, խեղկատակ խաղալիքը չեղաւ: Գրեց ինչ որ մեր հասկնող դասակարգին մեծամասնութիւնը կը մտածէր, ըսաւ ինչ որ երաժշտութիւնը ճանցող անձեր կը խորհէին. և ամէն մարդ զիտէ Թէ ո՞վ իրաւունք ունի:

իրենց պատկանած թերթերուն մէջ **Սթամպուլի** քրոնիկագիրին յօդուածը կը թարգմանեն հոչակաւոր disent-մենքը ու տեղով բացարձակապէս և կամ թարգմանել չուզելով, և յետոյ իրենց նեղը մնացած պարագային, մէջտեղ կը դնեն, առանց ամէնալու, առանց բաշտելու:

Կատակերգութիւնը այսքան մը կ'ըլլայ:

Մանաւանդ «Կանանց Հանդէս» պիտակով հրատարակուող թերթը, որուն մէջ կ'արձագանգէ Մարեանի փառաբանութեան երջանիկ զուգելով, ծիծաղելի դարձաւ այս վերջերս: Ինչո՞ւնդ պէտք, դուն բու խոհանոցի դասերդ և առտնին տնտեսութիւնդ նայէ, աղջիկս, դուն մեր աղջիկներուն սորվեցորդ որ ինչպէ՞ս հաւկիթներուն փորը կը լեցնեն և կամ ինչպէ՞ս պէտք է տղան կաթէ կտրել: Կօշիկէդ վեր մի՛ ելլեր, դուն չնամ որ աշխարհիս ամէնէն աղտոտ, ամէնէն անճաճ ու լպիլշ յայտարարութիւնները ընել տաս Տիկին Մոռի Փափազեանի մը, գանձելի, զգուշի խրատատուութիւններ, բժշկական պատուէրներ, կատարելապէս կնոջ մը բերնին չվայելիք խօսքեր, որոնց մարդ միայն առողջապահական զիրքերու մէջ կը հանդիպի:

«Կանանց Հանդէս»... Ատոր ուրիշ անուն մը կուտան: Երեսակայել որ դարձցական աղջիկներն ալ կը կարդան այդ տողերը ու բոլոր «Ժողովրդի» ընթերցող պարոններն ալ, որոնք ո՛չ մէկ ատեն պէտք ունին հասկնալու թէ յղի կին մը ի՞նչ ընծացք բռնելու է չվտանգուելու համար: Կարդալու է զայն, յօդուածագիրներուն միտքի աղբատուութեան ու թերթին ուղղութեան վրայ ճշգրիտ գաղափար մը կազմելու համար:

Սոսկալի չէ՞ ասիկա: Բայց քանի որ, ո՛վ «Կանանց Հանդէս», կը հաւնիս ընծացքիդ, բալէ՛, նամբադ շարունակէ:

Արդեօք անկողնակալութիւնը կը թելադրէ . . . :

Օ՛հ, անկողնակալութիւնը:

Ուրեմն կեցէք որ ես ալ իմ անկողնակալ կարծիքներս ու համոզումներս յայտնեմ, քանի որ ե՛ս ալ այդ փառաւոր fiascoին հանդիսատես եմ:

Մարեան այնքան մեծ արուեսագէտ մըն է որ կարեւորութիւն չէր տուած հազուադէպ կանոններուն եւ «ոքսէկլոք»ով ներկայացաւ հասարակութեան առջեւ, անվարժ, վախկոտ Եւրոպայէն, որով իրեն դեռ անփորձ ըլլալը կը հաստատէին:

Ձութակը բռնելու անանկ ձեւ մը, անանկ Եւրոպական եղանակ մը որ՝ չես ներեր նոյն իսկ քանակաւ Եւրոպական հոգի մը: Crosseր կամ Voluteր սանկ դէմ դիմաց բերաւ ունկնդիրներուն, փթերնիս խոթելու պէս բան մը. կարծեմ ֆովմէսի կը կեման եւ աւելի փափկութիւն, նաւակ, նրբութիւն կը դնեն Եւրոպայէն: Մէջ:

Դեռ ուրիշ արուեսագիտական ծիծաղելի անգիտութիւններ ու արտաոգ իրողութիւններ:

«Փոս մօք»երը այնչափ ահուելի կերպով կը հնչէին որ՝ ցնորանք կը պատճառէին միտքերու: Եւ այն պահուն երբ մեծ վարպէտը կը խաղաղէր, կը նուցէր իր ջութակին լարերուն վրայ, ասոյն խումբ մը մարդիկ ձեռներն իրարու կը զարնէին յափեսակութեամբ, չես զիտե անյաջողութիւնը ծածկելու համար որոտնդոտս այդ ծափերով՝ թէ հմայուած, գերուած՝ չեսնուած, եղակաւ նուագահանդէսի մը վերացիկ, երկնաւաք Բալետականութենէն:

Նշանաւոր դաշնակահար մը անկիւնը կը յօրանջէր՝ եւ ոտները գետնին կը զարնէր անհամբերութենէն:

Ո՛չ ոք ներկաներէն յանգեցաւ նախանձիլ թեգերահոչակ virtuoseին, հանրածառնօք maestroին: Միայն հետուէն հետու Սաբաթաբ նախանձեր է իր «Զիկայնէրվայդեն» երաժշտական կտոր այսքան յաջող, այսքան հրաշալի կերպով, նոյն իսկ իրմէ շատ աւելի աղէկ՝ չալած ըլլալուն համար: Զէ՞ մի որ տաղանդ ունեցողին կը նախանձին մարդիկ, ինչպէս անառակ հղափներու Բալետի հասարակութեան պատկերներուն կ'ուղղուին գրեթէ միշտ:

Մեկդի ձգեմք այս պարագան, Եւրոպական համար լրջօրէն անհոգութիւնը Մարեանի, որ մեծցուց երաժշտութիւնը բեմին վրայ, կրտսեց, ջլատեց, ինչ խանգավառ ու յուզումնալից զգայութիւն որ կ'ընայ ծորի երաժշտական որ եւ է գործիք մը: Երաժշտութիւնը

ամենանուրբ ջիւեր կը պանանջէ, ամէնէն կանոնապահ հնչակահուրիւնը եւ ակամջ, մանաւանդ ակամջ . . . :

Ես ալ հոս եմ, այսինքն ես ալ հոն էի, ազնիւ Օրխոյիկ Ալիս Մանուկեան: Այո՛, ե՛ս ալ տեսայ վարպետը իր համբաւին գագաթնակէ՛ն՝ վրայ բառած, ամբած, յոգնած ահորի մը նման:

Զեմ յիշեք ուրիշ այսօրինակ պարագայ մը՝ որ Խնիօնի հայելիապատ փառայեղ սրահը այսօր անաբեկած ըլլայ, անոր խորհրդաւորութիւնը պղծած ըլլայ խժալուր, անհանդուրժելի բզկուններով:

Գոնէ գեղարուեստին մեղմէ՛ք, ո՛վ ինքնահաւան փհացողներ:

Ենովք Աւսէն, զոր չեմ նանչնար իսկ, ոչ բարեկամս է եւ ոչ ալ . . . հօրեղբորդիս, որպէս զի զիմք պաշտպանել ուզեմ:

Շատ իրաւացի գայ իր դիտողութիւնները, որոնք բացարձակապէս կը ծառայէին մեր համայնքին արուեստագիտական հաշակին մտկարդակը բարձր պահելու, մինչդեռ Խառեաւեան եւ Մանուկեան անունով երկու մարդուկներ նեմարտութեան վրայ տող մը ձգել կ'ուզեն, կեղծի՛ի ամբողջ ճղմաբարտ:

նախնայութիւն մէջ ընկղմած, կուրցած, յուսահատած:

Ինչո՞ւ այսօր ասել նեմարտութիւնը, որ ամէն բանէ առաջ եւ ամէն բանէ վեր ըլլալու առաքինութիւնը կը խորհրդանշէ:

ՏԻՐԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Յ. Գ. — Վերջին պահուն կ'իմանամ որ Սարազար օդերուն աղէկ երթալուն կը սպասէ եղեր, Պոլիս գալու եւ անձամբ շնորհաւորելու համար Մարլեան մեծանուն ջութակահարը:

Կը պատմեն միեւնոյն ասէն որ՝ ծանօթ նուագանդէսէն ի վեր ո՛չ ուն ունի եւ ո՛չ ալ հանգստութիւն: Կերածը չմարսէր եղեր եւ աչիքն բան մը չերեւար ալ: Աւելաւրս սեւ կը տեսնէ, եւ իր սիրածները ասելի կ'երեւան աչիքն: Առաջ որ ջութակին համար նոգի կուտար՝ նիմա շարաքը անգամ մը ձեռք կ'առնէ զայն, ան ալ . . . փորձի համար: Յետոյ կուլայ եղեր շարունակ, «Զիկայներ» վայղէկէ՛րէն վրայ չկրնար նայիլ եւ ասոնք բոլորը անոր համար որ . . . կը նախանձի իրապէս Մարլեանին:

ՆՈՅՆ

ԴԻՄԱԿԻՆ ՏԱԿ

→→→○○○○←←←

Բ.

Պիւֆէն, Բազդուի մանրանկար տաճարի մը վերածուած, երկսու խնկարկուններու և ուխտաւորներու այլազան ու գունազեղ բազմութեամբ մը լեցուած էր: Գրեթէ բոլոր սեղաններն ալ յարձակմամբ գրաւուած էին: Մեղակցական հեշտազին ցնծութիւն մը կը սառառնէր մթնոլորտին մէջ: Տիրան անկիւն մը գնաց կղզիացաւ, ըմպելիով մը կազդուրուելու համար կրած յոգնութիւններէն և միեւնոյն ատեն իր ուշադրութենէն չվրիպեցնելով հեռզնեալ համառ զոյգերը: Յանկարծ, աչքերը անօրինակ փայլով մը շողացին: Շտկուեցաւ, մշտապատրաստ արթնութեան չարժու՛մ մը ըրաւ և հոգին ուրախութեամբ լեցաւ . . . : Սեւ Տօմինձն իր ընկերուհիին հետ ներս մտնելով զինքը դարձեալ բարեւած ու նստած էր քիչ մը հեռուն, իրեն դէմ:

«Սա Տօմինձն զիս չափազանց կը հետաքրքրէ և նոյն իսկ կը խոսովէ . . . , ո՛վ է՝ արդեօք . . . , պէտք է անպատճա՛ռ գիտնամ» կը մենախօս

սէր ինքնիրեն, դարեջուրի դաւաթը չըթնեցողն տանելով մեքենաբար։ Նոյն պահուն անախակալ անցք մը զինքը աւելի՛ վրդովեց։ Հայունին, իր անբաժան ընկերին հետ ներս մտնելով, խորհրդաւոր ՏՕՒՍՈՒՄ քովէն անցած ատենը գլխով թեթեւ մը բարեւած էր զայն... Զգուշաւոր, խուսափուկ ու հպանցիկ այդ բարեւին — որ ուրուագծում մըն էր աւելի — իմաստը դժուար չեղաւ մեկնել. «յարաքերական կապ մը մէջերնին, հէ՞ մտածեց Տիրան։ Ուրեմն այդ երկու զիմակաւորները՝ — իրարու ծանօթներ — անգիտակցօրէն միացած էին զինքը զբաղեցնելու համար։ Ու գեղեցիկ ցասկոտութեամբ մը գլուխը թօթուեց անդալաբար, ընկղմելով վերստին իր անվերջ գուշակութիւններուն մէջ՝ նայուածքը ՏՕՒՍՈՒՄ անբաժան։ Շուրջը, վերնայարկը, գլխուն վերեւ, ամէ՛ն կողմ, ահագին չլուկներու և երգերու խուլ, մշտատեւ աղմուկ մը ժխորալից կը բարձրանար՝ խեղդելով, ծածկելով, պարուրելով մեղադարտ ու գլուխ գլխի մտերմութիւններով չլմորուն ու այսահար զոյգերուն գերաւ գոյն արդուանքը։ Ամէնքն ալ հաճոյքի աստուածը կը փառաբանէին։ Ու յաւատանջ, բուռն ու հեշտազեղ սիրերգներու, գեղօններու յարափոփոխ ու իրերայաջորդ եղանակները՝ հոգեխուով ձայներու և նուագի ընկերակցութեամբ, հրաշքներ^(*) գործել կուտային մթնոլորտին ու միջավայրին ներած պայմաններուն չափով...»

Այս կեանքը շատոնց ծանօթ էր Տիրանին։ Պատանեկան հասակէն արդէն, առթիւներ ունեցած էր երեկոյթներու, պարահանդէսներու մէջ սպորդելու, և քիչ քիչ, այդ կարգի ժամանցներուն ու զբօսանքներուն ոգիին, գաղտնիքի՛ն թափանցներ էր, իր առջի ապշահար ու զմայլագին տպաւորութիւնները բերել յանգեցնելով՝ կեանքի՛ փիլիսոփայօրէն սահմանուած ունայնութեան։ Սինեմաթիոգրափի, ֆալէիսօֆի փայլուն, յալիշտակիչ պատկերներու և զիւթանկարներու այդ զգայութենէն՝ իր պատանեկան երեւակայութիւնը, անցեալին մէջ, ցնորակոծ խանդավառութիւններուն դրոշմը կրեր էր երկար ատեն։ Բայց տակաւ, սովորութեան ու յաճախանքի վիճակ մը, այդ առաջին ու վաղանցիկ տպաւորութիւններուն ցնդելուն և, կեանքի, իր մե՛րկ ու սարսաղին իրականութեան մէջ ընդհամարելուն նպաստեր էր։ Այսպէս, փորձութիւններու, դառնութիւններու և պատրանքներու շրջանէն անցնելով, Տիրան, հեռազնաէ, իրերը աւելի՛ պահարկունութեամբ և ներադէտ հայեացքներով քննելու պէտքը զգացեր էր ու յաջողեր։ Սկսեալիկի անայլալ ու անխուլ անտարբերութեամբ, բայց փորձ ու հատու ախարկով մըն էր որ կը դիտէր հիմա Տիրան իր բոլորովին Տեսարանը մեծապէս զուարճալի էր ու զբօսեցուցիչ։ Գեղապաշտի, սիրահարի ու զինովի՛ շահատակութեանց անցքեր ու պատկերներ իր աչքն ու միտքը կը զբաղեցնէին ու մէկէն միւսին կ'անդրադառնար՝ տարփանքի, ինքնամոռացումի ու հեշտանքի այդ յաջորդական ու մշտափոփոխ դրուագներով գրաւ-

ուած : Ու կապոյտ սնդուսէ առնակսն հագուստներու մէջ՝ անձնամատոյց կնոջ մը շաղակրատ բարբառնջանքներէն վերացած ու աթոռին վրայ տատանելով՝ սուրճի գաւաթը ձեռքէն ձգող վայելչադգեստ երիտասարդ գինովի մը անհանգիստ շարժումներէն՝ իր ակնարկը կ'երթար կանգ առնել փոփոխակի՝ իր երկու զիմակաւորներուն՝ Տօմինօին ու Հայունիին վրայ :

Նրբահասակ, անպէս տղայ մըն էր Հայունիին ընկերը, գրեթէ պատանի մը, նմանապէս Հայ : Իր երկարատեւ վաղքերուն ու արշաւներուն մէջ, Տիրանի համար ալ գաղտնիք չէր պարագան թէ, հասարակ կամ մասնաւոր պարահանդէսներու մէջ սրբան յաճախադէպ էին այս անցքերը — գաղտնի փախուստներ՝ գիշերանց՝ ծնողական յարկէն, երթալ զբօսնելու, զուարճանալու և, աւագ, խնաւու համար վերջապէս — ու անվերականգնելի՝ կերպով — այդ յորձանուտ ու փորձանուտ բաւիղներուն մէջ... Պարահանդէս : Մի կարգ մը աղջիկներու — զժբախտաբար բաղմաթիւ — ջիղերը ելեկտրացնող այդ մոգական բառը : Տիրան դառնօրէն կը մտածէր ու կը ցաւէր : Քանի՜ անգամներ, պատահաբար ճանչցած այդ կարգի աղջիկներէն ոմանց հանդիպած էր այդ պաշտներուն մէջ, ուր, անոնք, պարելու, ուտել խմելու և «օրերնին օր ընելու» հաճոյքին գոհացում տալէ ետքը, ուշ տոնն տուն վերադառնալու դժուարութեան մը առջեւ և կամ ըմպելիքի չափազանց գործածութենէ մը արքշտտած ու անկարող, կ'երթային համակերպիլ ու կորսուիլ իրենց ընկերացող ցեկրիւնէն ֆալալիէին առաջնորդած անձանցով վայրը, — պանդոկի մը մէկ սենեակը... Տխուր ու ցաւազին իրողութիւններէ առթուած այս խորհրդածութիւններուն մէջ միտքը մոլորած տոնն, Տիրան զիտեց պահ մը թէ Տօմինօն մէկ ձեռնոցը հանած էր ու օձիքը թոյլ ձգած — տաքէն ու գոլորշիներէն զգացուած անհանգստութենէ մը թերեւ : Եւ արագ ու սուր ակնարկով մը — որ փայլակի մը անցքին տեւողութիւնն իսկ չէր ունեցած — Տիրան յաջողեցաւ անոր փողկապէն ու մատանիէն զայն ճանչնալ : Անկասկած ան էր, սոսկալի՜ բան : Հոգ, բարեկենդանի գիշերով և խորհրդաւոր կնոջ մը հետ, ինչ գործ ունէր Եղուարդը, իր սիրելի բարեկամը...

*
*
*

Եղուարդ Սուտակեան արդի մըն էր՝ բառին ամէնէն շեշտուած իմաստով, մէկը ներկայ նորագոյն ու դրսիզօրիկ երիտասարդութեան մէջ անուն ու գիրք ունեցող այն բաղմաթիւ դէմքերէն՝ որոնք մասնաւոր, բացառիկ զգայապաշտութիւններու մղում կուտան՝ արդիօրէն ու տենդազին ապրելու ըմբռնումներուն ու ձգտումներուն նորանշան միջնորդութիւն մէջ : Եւ արդէն, իր դրսերեւոյթը, խօսակցութեան անվերապահ ու շարժումներուն անհանդարտ ընթացիւնը կը մատնէին իր

միջուկին խնկութիւնը. — աչքերուն տարօրինակ մռայլը ուր բուն ու տարտամ ցանկութիւններ կը բռնկէին, ամէն անգամ որ «կին» բառը պատահամբ յիշուէր, ձեռքերը՝ որոնք ոչինչ ունէին ազնուական ու նուրբ, ընդհանաւորը և որոնք սովորաբար կասկածելի խոնաւութեամբ մը օծուած կ'ըլլային, — վատաւուղջութեան յայտարար նշան, — ամէն բանէ առաջ կը յատկանշէին իր մէջ՝ այլատեքան հոգի մը, ընդունակ՝ նոր յոգեբու ինչպէս խռովքներու և ծարաւ՝ սուղ ու կոյս վայելումներուն, հեշտանքին:

Տիրանին հետ խառնափեաց, անկանոն տիպարին բարեկամութիւնը կը սկսէր հին թուականէ մը՝ երբ դրացի էին եղած ատենով, Պոլսի գիւղերէն մէկուն մէջ բնակած ատենին: Յետոյ իրարմէ հեռանալով՝ գործի աշխարհը նստուած էին, ուր զանազան առիթներով՝ իրարու հանդիպումներ այդ վաղեմի բարեկամութիւնը՝ շարունակելու նպաստեր էին: Իրենց խառնուածքին, ճաշակին և ընդունակութիւններուն տարբերութեան, անհամաձայնութեան հակառակ՝ գիտցած էին իրարմով հաշտ ընթանալ: Եղուարդ ամուսնացած էր հարուստ աղջկան մը հետ և զաւակներու հայր եղած: Ահա թէ ինչո՞ւ, Տիրան, այդ գիշեր, իր դէմը տեսնելով դիմակաւոր ու խուսափողական վիճակի մը մէջ՝ Սուտակեանը, դառնութիւն մը զգացեր էր իր հոգիին մէջ...: Այդ նոր շահատակութեան, այդ զեղծումին, չէր ներած Տիրան աւելի՛ քան որչափ չէր զարմացած՝ Եղուարդին անձանօթ մնալու ջանքերը դիտելով: Աշխարհիկ ինչպէս ընկերային նորագոյն ըմբռնումներու և ձգտումներու հոսանքի մը առջև, — ուր ընտանիքի տէր հայրեր՝ ոտքի տակ առնելով մերթ՝ պատիւի, բարոյականի, պարկեշտութեան ամէն նկատում, ամուրիներու նախանձը շարժելու աստիճան անլուր շահատակութիւններով կը պանծան, — Տիրան, հակառակ իր դարսզրիկ հայեացքներուն, վտանգաւոր կը գտնէր ընտանեկան բարքերու մէջ տարածուող այս երեւոյթը՝ որ անկումի, անպակասութեան կ'առաջնորդէր անկասկած, և չէր բաղձար, չէր հանդուրժեր որ ամուսնի և ամուսնացեալի որո՞շ վիճակներուն տարբերութիւնը ջնջուէր, ցնդէ՛ր՝ ինչ որ աղետալի հետեւանքներ միայն կրնար ունենալ՝ չառ մը տեսակէտներով: Գիտէր թէ իր այդ համոզումը ոչինչ ունէր նոր և արդի, թէ ան հեղհուութեան ազաղակներով միայն կրնար ընդունուիլ տոններու աշխարհին մէջ, բայց պաղարկելով կը մտածէր թէ ի՞նչ օգուտ կամ շահ կրնար ունենալ՝ անտալարակ modernismeի մը հետեւած ըլլալու սին փառքովը խրոխտալը...: Աննշան, պարզ պաշտօնեայի մը դիրքէն, օրին մէկը յանկարծ, բախտին քահանա մէկ դարձուածքովը, նիւթապէս նախանձելի ամուսնութիւն մը կնքելով, առեւտուրի մարդու, վաճառականի պիտակի մը տիրանալ, ունենալ բոլոր դիւրութիւնները ու վայելել գոհունակութիւնները լիառատ կեանքի մը, բարեսիրտ ու պարկեշտ

կնոջ մը գուրգուրանքը, սէրն ու համարումը իր վրայ կեդրոնացած զգալ՝ ո՞վ պիտի տխմարութիւնը ունենար այս տեսակ նպաստաւոր ու անդորր երանաւէտութեամբ կացութեան մը ոլորտներէն դուրս չեղելու... Բայց Սուտակեան արդիական մը, նորամուլ մըն էր և սիրահար մը՝ խանդավառ ու զգայատանջ յափշտակութիւններ առթող հեշտազրգիւ հրապոյրներու... Եւ ինչ որ, Տիրանին — որուն համար գրեթէ գաղտնիք չունէր իր բարեկամին ասլերակերպը, մտածումներուն մէջ խռովիչ ու սեւեռեալ ցաւազնոտութեամբ մը կ'անհունանար — սպրահան էր Եղուարդին cynique հնարամտութիւններով՝ իր կինը խաբելուն։ Անպատկառ, լպիւշ ու միանգամայն գիւային բան մը ունէր այն եղանակը որով Սուտակեան տեսակ մը պարծենկոտ հպարտութեամբ կը յայտնէր այդ առթիւ իր յղացած աւելի կամ նուազ հանճարեղ գիւտերը։

Օր մը՝ անձնական խիստ կարեւոր, կենսական գործ մըն էր որ պատճառ պիտի ըլլար տունէն իր բացակայութեան. ուրիշ օր՝ մտերիմ բարեկամի մը երեկոյթի հրաւերը չկրնալ մերժած ըլլալուն ստիպողական հարկը. այնինչ օր՝ չոգենաւը փախցնելուն ռափիկ պատճառաբանութիւնը. և ինչ որ, մինչդեռ իրականին մէջ ասոնք պատրուակներ էին միայն առանձին և արծակ համարձակ իր վայելքի աշխարհին հորիզոններուն մէջ թափառելու... Իր սիրային արշաւներուն և շահատակութիւններուն մէջ իրեն յարմար մշտնկեր մըն էր Սեպուհ Բմայքեան — ևսապաշտ, խորխուռ ու մեծամիտ տիպար մը, հսկայ դաշափարականներով ու ծրագիրներով ծանրաբեռնուած ու անած ուղեղ մը, որուն համար Եղուարդ անսահման հիացում մը կը տածէր, հիացում՝ որ տարփանքի ձեւը ունէր յայտնապէս՝ իր յափշտակուած ու զմայլագին արտայայտութեանը մէջ։ Տիրանին համար անծանօթ մը չէր Բմայքեանը — պատահաբար ճանչցած օր մը իր բարեկամին միջոցաւ — և առաջին տեսակցութենէն արդէն զգացած էր հաճոյքի այդ երկու անբաժան ընկերներուն միջեւ տիրող անմա'ն ներդաշնակութիւնը, կեանքը լիաշուքին ու լիաթոք վայելելու մասին իրենց հայեացքներուն ու անորոշակներուն նոյնաշման հանգիստութիւնը։ Անկոխ գետիններուն խորհրդաւոր ու հմայիչ տարածութեան մէջ՝ կոյս շահաստաններ փնտռելու հետամուտ այս փափկածաշակ ու զգուարահաճ հոգիներուն հանդէպ՝ Տիրան գիտէր տեսակ մը զգուշացման օրութեամբ վերաբերուիլ։ Որովհետեւ կը զգար թէ ասոնք, իրենց միջեւ, մտերիմ եղբայրակցութիւն մը կաղմեր էին, այլամերժ ու հեղնոտ՝ ուրիշին նկատմամբ, ո՞վ որ ալ եղած ըլլար։ Եւ արդէն՝ Դրամի ու Կնոջ աշխարհներէն դուրս՝ վայելքի, հաճոյքի աննիւթօրէն նուիրական հորիզոններ արհամարհող անպարներու աչքին ինչ նշանակութիւն կրնար ունենալ բարեկամութեան, բնականսիրութեան մաքուր զգացումներուն խմբուր։ Ու Տիրանին հոգին կը դառնանար այս խորհրդածութիւններուն մասնուած պահուն։

Այդ գիշերը բնա՛ւ Եդուարդին քով չգնաց։ Թողուց որ ան իր նոր ընկերուհիին հետ զբօսնու։ Վրդովել չուզեց անոնց մտերմական վայելքը, ղգալով որ իր բարեկամին դիմակաւորումը արդէն բաւականէն աւելի պերճախօս էր. — առանց ճանչցուելու ըմբռնել բարեկենդանի հեշտալի անուշութիւնները... Միայն թէ անոնց հետքը չկորսնցուց։ Առտուան դէմ տեսաւ անոնց Սեպուհ Քմայքեանի ընկերակցութեամբ ծանօթ գարեջրատուն մը մտնելը ու հեռուէն հետեւեցաւ անոնց։ Եդուարդ, այս անգամ, դիմակն ու Յովհնոն նետած էր և իր սովորական անտարբեր... կերպարանքին մէջ մտած։ Եւ արդէն Տիրան բոլորովին աւելորդ գտեր էր այդ դիմակը։ Ի՞նչ կը ծածկէր ան։ Եդուարդ ի՞նչ պէտք ունէր անոր։ Իր ընտանեկան ինչպէս ընկերային կեանքին մէջ, արդէն, ամէն օր, ան կը խաբէր իր կիներն ու բարեկամները, — անոնց հետ իր յարաբերութեանց պահուն կեղծիքի, խաբէութեան դիմակ մը անցուցած ըլլալով միշտ երեսին։ Երկու նոյնաման դիմակներ վրայէ վրայ դնելու ի՞նչ պէտք կար։

Յուշական նուագախումբ մը իր սիրային եղանակներուն յաւիտենական յանկերգը կը հնչեցնէր երգեցիկ այսահարներու ընկերակցութեամբ և քանի մը Հայ երիտասարդներ՝ սեղանի վր շուրջը բոլորուած, բարեկենդանին... կենդանութեանը կը խմէին շմորուն ու խայտաղին։ Եդուարդ և իրենները քիչ մը անդին նստած կը դիտէին այս հետաքրքրաշարժ(.) տեսարանը, բարձրագոյ քրքիջներ արձակելով։

Յանկարծ մէջերէն մէկը՝ ոգևորուած, վերացած՝ նուագածուններուն ճերմակ դրամ մը նետեց. ամէնքն ալ, մեքենական շարժումով մը հետեւեցան անոր... Գաւաթներ փչրուեցան, չիշեր գլորեցան, բայց զրամները միշտ կը տեղային... Եւ այդ տեղատարափին տակ, նուագախումբը՝ ցնորակոծ՝ յուզումէն կը զառանցէր...

Կատակերգութեան վերջն էր։

ՄԻՀՐԱՆ ՌԵԴԱԿՏՈՐ

«ՄԱՍԻՍ»Ի ՀԱՐՑՈՒՄԸ

ԻՄ ՊԱՏԱՍԻԱՆՍ

Ղշմարիտ սէրը միակ ղգացումն է որ գիտէ ամէն դժուարութեան յաղթահարել։ — Հայր մը յաճախ իր օգտակար փորձառութիւնովը կրնայ արգելք ըլլալ զաւկին ամուսնութեանը, միշտ ապագային հեռանկարը ունենալով իր աչքերուն առջեւ։ Սակայն վերջապէս ինք չէ՛... ամուսնացողը. ամուսնական արգելքները առանց ուժեղ տրամաբանութեան մը յենած ըլլալու, ղօրաւոր և իրաւացի չեն երբեք։ — Աւելի իրաւունք պիտի տայի այն մարդերուն՝ որոնք ծնողական ղգացումին

մէջ կը թերանան, փոխանակ, օրինակի համար, ինքզինքնին քարափէն ծով նետելու կամ չուանէ մը կախուելու և կամ, եթէ կ'ուզէք, պատահանէ մը վար նետելու, արարքներ որոնք շատերու սիրտերը խորտակեն թերեւս, մինչդեռ հակառակ պարագային, միայն ծնողքը պիտի վիրաւորուի, ա'ն ալ... ամիս մը միայն: — Կեանքը այնքան անուշ է, երբ մարդ կը սիրէ ու կը սիրուի, երբ հոգիի, մտածումի ներդաշնակ ամուսնութիւն մը արդէն գոյութիւն ունի իր և սիրականի մը միջեւ: ամէն պէտք եղած ճիշդ թափելու է, ի՛նչ գիտով որ ալ ըլլայ, համեմուտ համար ամուսնական կեանքի այն նպատակին՝ որ երջանկութիւնն է: Անհատականութեան զգացումը ո՛րչափ զօրաւոր ըլլայ մարդու մէջ, այնքան աւելի իր բնազդներուն, իր տենչանքներուն կը հակի: առանց ատոր ուժին՝ մարդ հիւանդ է և ամէն տեսակ արտառոցութիւն բնելու կարող, բնդունելով որ տեսակ մը հիւանդութիւն է անձնասպանութիւնը: Բայց պէտք է խոստովանիլ թէ սիրային զոհերուն բիւրաւոր տեսակները կան, զորս ուսումնասիրելու համար Մանդէկացցա մը ըլլալու է: Արդէն այդչափ ալ շատ չէ՞ դրօշի մը համար՝ որ je m'en fou-tisteի դպրոցին կ'աշակերտի:

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Կ Ե Ա Ն Ք Ս

Ո. ԶԻՎԻՆԿԵՐԵՍԻՆ

Զմբան խուր գիւեք մը ցաւս՝
Սրկունքէ մը վերջ դառնալէս,
Լալու համար ծնած հոգիս
Աւախի եկաւ՝ կեանքին անգէս:

Օրօրանիս մէջ կարծր ու չոր
Իր մասներովը սրբաւէս,
Տեսնուքիւնք դրաւ բոլոր
Հասեղծողքս՝ իր լոյսին հետ:

Քար կտրեցաւ կուրծքիս ներքեւ,
Սիրքս լաւէ՛ս մաղձով առի,
Լոյս չի շողաց հոգոյս վերեւ,
Յոյսն անծանօթ մնաց ինձի:

Ու սգաւոր գիւեքներու
Խորհուրդները լոկ գրկեցի,
Խուժաններէն ես միշտ հեռու
Հմայեցի բոյնը անուրջի...

Մեկուրեան հետ եղբայրացայ
Հոգին գոյնը լոկ սիրեցի...
Ու այսերու ծիրաներիցեայ
Կախարքանքն ես ծաղրեցի:

Սէրը շատ ցաւս գտաւ հոգիս,
Շատ անհաւեր ու շատ հպարտ,
Անհետ անցաւ ու լիկ գիւ,
Ծեփձեփումովն իր պննազարդ:

Վերջապա սիրքս առաւ,
Պատահեց լոկ հոգոյս սիրեց.
Շիրմս վրայ դա՛ւ սրազբաւ
Կ'ուզեմ գրեւ. «Ան չի սիրեց...»

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐԵԱՆ

ՌԷԹԷՈՍ ՊԷՐՊԷՐԵԱՆԻ ՄԱՂԸ

Խոր ցառով կը գոմեմ յանկարծական ու աղետալի մանր ծանօթ ուսուցչապետ ու բազմաբնույթ դաստիարակ Ռէթէոս էմ Պէրպէրեանի, որ տեղի ունեցաւ կիրակի առաւել, կարեւորեալ տարեկան տոնակէտի մը համար: Մինչեւ Շր. իրիկուն ոչ ոք տեղի ունեցաւ ունէր իր հիւանդութենէն եւ ժամանակէ մը ի վեր զինքը ընկնող շարժումներ, կը կարծուէր որ պիտի կորսնցնէր իր սասկերթիւնը. բայց 8 օրէ ի վեր շատ զուգահեռ էր. յանձնարար կը հետեւէր եւ շատ արագութեամբ նոսրանքէն կ'ունենար: Վերջին շաբաթը անհանգստութեամբ անցուց: Գունաստիւնը հետզհետէ աւելի զգալի եւ շատ արագ վիճակ մը կ'առնէր: Շաբաթ օրը տեղի ունեցաւ զոյգ էր Պէրպէրեան վարժարանը. բայց Պէրպէրեան էմ. ամբողջ օրը զբաղած էր եւ իրիկունը բարեկամներու եւ զուակներուն հետ հանգստեան ու զուարթ ժամեր անցընելէ ետք առանձնացած էր իր սենեակը: Առաւել անհանգստութեամբ նստելով եւ անհանգստութեամբ մէջ արթնցած էր: Ընդհանուր ճիշդ. Պէրպէրեանի եւ Տոքթ. Խորհրդակցութիւն, որոնք փութացին եւ ամէն անվիշակաւ միջոցներ գործադրեցին. հետզհետէ կը զուգահեռ. հանապազօրէն չէր կորսնցնուած բոլորովին, բայց բոլոր մը արտաքին անկարգ էր եւ քիչ ետք Պէրպէրեան էմ. հոգին առանցիկ կ'էր ժամանակ պայմանէ մը ետք մահուան դէմ: Մահուան ժամը լուրջ տարածուեցաւ Սկիւսարի մէջ. կ'էր օրէն իսկ առաջ Բերաի մէջ. այն ատեն լսած էին արդէն: Գոմը հազարդուեցաւ նաեւ Ս. Պատրիարքին եւ լուսանկարիչ Զարեան էմ. Պէրպէրեանի անհանգստացած մարմինն լուսանկարը առաւ. մէկ րոպէի դիմելով: Պէրպէրեան ծնած էր Խառ-Քէօյ, 1848ին եւ իր տնային տնոյ հետ երկուրեակ էր: Զուակն էր Խառ-Քէօյի ծառայողը: Ռէթէոս լուրջ եւ աշխատող դպրոցական մըն էր: Տարբարեկանին մէջ առաջինիւնը ցոյց տալով իր ուսուցիչներ, Երեսէն վարժապետներ եւ Մասնաւոր Կարգաւարտներ, ամէն բանակներուն եւ դրամայի կը շատ լինէր: Պէրպէրեան օգնական ուսուցիչ եղաւ. Երեսէն վարժարանին մէջ, երբ հազիւ

18 տարեկան կ'ար եւ ժամանակ մը վերջը ուսուցչական պաշտօնով զնաց Ադրիանուպոլիս, որ հազիւ վեց ամիս մնաց. դարձին ստանձնելով իր դասերը Խառ-Քէօյի Երեսէն վարժարանին մէջ: 1869ին ուսուցչութեան հրաւիրուեցաւ Կասր-Քէօյի Համալսարանին վարժարանը: Հին պաշտօնավարեց մինչեւ 1874. միեւնոյն տարին ուսուցիչ էր նաեւ Փանոսեան եւ Ազգայեան վարժարաններուն մէջ, որ պաշտօնավարեց մինչեւ 1875: Պէրպէրեանի Առաւել վարժարանի մէջ դաստիարակութիւնը ծնունդ տուաւ մասնաւոր վարժարանի մը հիմնադրութեան: 76ի Ռեւոլուցիոններուն միջոցին անհամաձայնութիւն մը կը ծագէ իրեն եւ Հոգաբարձութեան անդամներուն միջեւ. Պէրպէրեան տեղի չի տա եւ նոյն տարին Կասր-Քէօյի Լաւին փողոցը կը հիմնէ իր վարժարանը, որ կը մնայ երկու տարի: Գիշերօթիկներու քիւլին հետզհետէ աւելնալով՝ Պէրպէրեան 1878 Նոյնին կը հարկադրուի վարժարանը փոխադրել Սկիւսար, Ինստիտ. Երեսէն վարժարանին վարժարանի շէնքին մէջ, որ տարի մը մնալէ ետք, 1879ին կը հաստատուի վերջնական արդի շէնքին մէջ: 1883ին ամուսնացած էր Օր. Զարուհիի հետ, Մեղակուեան վարժարանի ընթացաւարտներէն, եւ ունեցած է երեք զուակներ, Աննիկ (շուտով բաժնուած ծնողական զոյգէն) Մաննիկ, Օննիկ, Շահան, Նուրիան: Իր ընտանեկան երջանկութիւնը մթաղեցաւ Տիկին Զարուհիի մահով, որ իր կեանքին մեծագոյն հաւուածը եղաւ քերես:

Պէրպէրեան իր ուսուցչական եւ գրական կեանքն զատ, ունեցաւ նաեւ հանրային կեանք մը: մասնակցելով Պատրիարքարանի ժողովներու: Սիմոն Կէլի վերջին վարչութեան օրով անգամ եղաւ Քառաւ. Ժողովի, անգամակցեցաւ յանձնաժողովներու, մասնաժողովներու եւ Ռաւման. Խորհուրդի, որուն անդամակցեց եղած անէն պատրաստեց Կրթական Ծրագիրը եւ կազմակերպեց Կանոնագիրը: Իր վերջին պաշտօնը եղաւ Անտիպատրիարքի Ռաւմանի օգնական Սեփակի Խանակապետութեան: Ողբացաւ Պէր-

պէրեան էձի մարմինը կիրակի օր ժամը Յին փոխադրուեցաւ Ս. Խաչ եկեղեցին, ցախագահութեամբ Տ. Մկրտիչ Արք. իր շուրջը ունեցնելով Տ. Ներսէս Վ. Դանիէլեան, Ս. Խաչ եւ Ս. Կարապետ եկեղեցիներուն ֆահանգները, դպիրները, որոնց կը հետեւէին Միացեալ Թաղ. Խորհուրդի անդամները, Պէրպէրեան Վարժարանի զիւերօթիկ եւ ցորեկեայ ուսանողները եւ հոծ բազմութիւն մը: Երգեցողութիւնները տեղի ունեցան թխուր եղանակով եւ ամէն ով խորապէս զգածուած էր:

Իր անունին ու կեանքին տրժանի հանդիսաւորութիւնով տեղի ունեցաւ յուզարկաւորութիւնը, երկուշաբթի օր, ժամը 3ին, Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցիին մէջ, Հակառակ խիստ գէշ ու անձրեւոտ օդին, համակրական ընդհանուր արտայայտութեան ցոյց մը եղաւ Պէրպէրեանի յուզարկաւորութեան հանդէսը, ներկայութեամբ ամէն դասակարգէ ծանօթներու եւ համակիրներու խումբն բազմութեան մը, որոնք փութացած էին շրջապատելու իր դագաղը: Սկիւտարի միացեալ Թաղական Խորհուրդը, ներկայ էր խնդիրն եւ փոքրեւորները կը հսկէր յուզարկաւորութեան կանոնաւորութեանը, իսկ յուզարկաւորները ընդունելու համար, Պէրպէրեանի նախորդ սաներէն մասնախումբ մը կազմուած էր. Տէարք՝ Հրանտ Պէզազեան, Վահան Եարճանեան, Տօքթ. Պ. Պէզազեան, Պետրոս Ատուրնի, Կոպեռնիկ Պէզազեան, Յարեն Վայրապետեան, Գամէր Շիրինեան, Նշան Գալփաեան, Միհրան Զուհանեան, Պէրպէրեան Վարժարանի սաները ամբողջութեամբ շրջապատած էին դագաղը: Պէրպէրեան էֆ. ի որդին՝ Շահան՝ արտասուածոր աչքերով կեցած էր դասին մէջ, շրջապատուած ողբացեալ ուսուցչապետին բարեկամներէն: Ուսուցչական Խորհուրդին կողմէ՝ իբր պատգամաւոր՝ ներկայ կը գտնուէին յուզարկաւորութեան, Ստեփան էֆ. Կուրտիկեան եւ Հրանտ էֆ. Ասատուր Կեղը. Վարժարանի խնամակալութեան կողմէ՝ Յակոբ էֆ. Լիստան եւ Յակոբ էֆ. Յակոբեան. Նոյն վարժարանին ուսուցչական մարմինին կողմէ՝ Գառնիկ էֆ. Բարունակեան, տասերկու ուսանողներով, որոնք ծաղկալուծ մը բերած էին Բերաի Լիստեան Վարժարանին կողմէ՝ Դրիգոր էֆ. Մարգար

եան, Մայր Վարժարանին կողմէ՝ Հայկ էֆ. Խօճասարեան, Նոյնպէս պատգամաւորութիւններ՝ Մարքի-Քէօյի Վարժարանէն, Աղջկանց Ամերիկեան Վարժարանէն, Սկիւտարի Սէօռեւու Վարժարանէն ժամը 3ին սկսան արաբողութիւնները, նախագահութեամբ Ս. Պատրիարքին, որուն շուրջը կը գտնուէին Տ. Դէորդ, Տ. Գարբիէլ, Տ. Հմայակ, Տ. Մկրտիչ եւ Տ. Մովսէս Սրբազանները, Տ. Ներսէս Դանիէլեան, Տ. Բաբգէն, Տ. Տիրայր, Տ. Արտաւազդ, Տ. Զաւէն, Տ. Եղիշէ Զիլինկիրեան, Տ. Եգնիկ Գալազեան, Տ. Մարկոս, Տ. Եզրաս վարդապետները եւ բազմամիւ բաճահաններ ու զպիրներ, իսկ զասին մէջ սգաւ կիր կը կենային՝ Կրօն. Ժողովին կողմէ՝ Տ. Աւետիկ եւ Տ. Դրիգորի վարդապետները եւ Տ. Միքայէլ քահանայ, Դագաղին ծոպերը կը կրէին Տէարք՝ Արիս Ֆէսճեան, Յակոբոս Ճէճիզեան, Ստեփան Կուրտիկեան, Անտօն Թարագ, Վահան Մատթէոսեան եւ Վեր. Շմանեան, իսկ կերտները կը կրէին Տէարք՝ Սիմօն Գայտէլեան, Յովհաննէս Պառաւեան, Յակոբ Արապեան, Նշան Գալփաեան, Թէոդիկ Լապճինեան, Արարողութիւնները կատարուեցան դաշն ու տխուր հանդիսաւորութիւնով, յուզիչ տպաւորութեամբ մը համակելով ներկաները: Ամէն ոք զգածուած էր ու արցունքի շիթ մը ունէր աչքերուն մէջ, Ս. Պատրիարքը խօսեցաւ մէկը իր ամէնէն յուզիչ ու պերճախօս դամբանականներուն, սքանչելապէս պատկերացնելով Պէրպէրեանը, իբր հոգիի, միտքի եւ աշխատութեան մարդ Ս. Պատրիարքը աւարտեց իր դամբանականը, յուզիչ մխիթարական մը ուղղելով անոր գեռատի զաւկին եւ պատուիրելով որ հաղորդէ զայն իր եղբայրներուն ու բոլորը. «Ձեր մայրը կանուխէն բաժնուեցաւ ձեռնէ եւ հայրերնիդ ալ ահա՛ կը հետեւի անոր. բայց դուք որքա՛ն ծնողագուրկ չպիտի մնաք: Ազգը կը ստանձնէ ձեր պաշտպանութիւնը եւ հոգաւ ծուծիւնը եւ ամէն կերպով օժանդակ պիտի գտնուի ձեր բարեխիշտանակ հօր հիմնած վարժարանին յարստութեանը համար, որպէս զի իր սաներն ալ չզրկուին դաստիարակութենէն, ինչ որ ինծի պարտականութեան բաժին կը նկատեմ, պիտի կատարեմ սիրայօժար այս նպատակով եւ կը հրաւիրեմ կրթասէր ու բարեսէր հանրութիւնն ալ օժանդակ գտնուե-

լուս։ Ն. Սրբազնութիւնը հոգեցւոյնց շնչոտ-
րով մաղկեց որ Աստուած նոր և արժանաւոր
յաշորդներ յարուցանէ Պէրպէրեանի պէս
հանրութեան օգտակար անհատներու տեղ,
զոր կը խլէ անողորմ մահը մեր գուրգուրան-
քէն։ Դամբանականին խոր տպաւորութեան
տակ՝ պատկառելի Թափօր մը կազմուեցաւ և
զագաղը հանուեցաւ եկեղեցիին զաւիթը, ուր
դամբանականներ խօսեցան՝ Պէրպէրեան վար-
ժարանին ուսուցչական մարմինին կողմէ՝
ընդհանուր հակիչ Լեւոն էֆ Թաշեան, նա-
խորդ տարուան ընթացաւարտներուն կողմէ՝
Պրն. Տէօվլէթ Գէորգեան, նախկին շրջանա-
ւարտներուն կողմէ՝ Թէոդիկ էֆ. և աւագ
դասարանի ուսանողներուն կողմէ՝ Պրն. Գէորգ
Փիլիպոսեան։ Դամբանականներուն արտա-
սանութենէն ետքը, Ս. Պատրիարքը բաժ-
նուեցաւ Թափօրէն, Պէրպէրեան վարժարան
այցելելու համար։ Թափօրը, խուռն բազմու-
թեան մը հետ՝ ուղղուեցաւ Սկիւտարի ազգ.
գերեզմանատունը։ Հոն դամբանականներ խօ-
սեցան Տ. Ներսէր վարդ. Դանիէլեան, Սի-
մոն էֆ. Գարամաշեան և Պրն. Պրն. Թազ-
ւոր Տէօվլէթեան, վարհան Իսախան և Եր-
ուանդ Անդրէասեան։ Ու, անողորմ վայրկեանը
ժամանած, գերեզման իշխելուով անշարժ
մարմինը անոր՝ որ մշտնջենական եռուզեռի
ու գործունէութեան խորհրդանշանն էր եղած,
յանձնուեցաւ ցուրտ հողին։

★ Պէրպէրեանի մահով, իր վարժարանին
յարատեւութիւնը պէտք չէր որ կտրուէր։ Ան
պէտք է պահպանուի և շարունակէ իր կրթ.
գործունէութիւնը։ Եւ ամէն անհատի պար-
տականութիւն կ'իյնայ՝ իր կարողութեան չա-
փով ջանադիր ըլլալ այդ նպատակին իրա-
գործութիւն։ Ուրախութեամբ կ'արձանագրենք
Սէ, այս բաղձանքը, որ ընդհանուրինն է,
իրականացումի ճամբուն մէջ է, Ս. Պատ-
րիարքը ստանձնած ըլլալով անոր հովանա-
ւորութիւնը և վերին հսկողութիւնը, իր կողմէ
Ընդհանուր Տնօրէն կարգելով Պետրոս էֆ.
Կարապետեանը։ Պէրպէրեան վարժարանի
պահպանումը և տեսականութիւնը ապահովող
միջոցներէն մէկն ալ պիտի ըլլայ՝ բառնալու
շանքը 400 ոսկիի պարտքը, որուն համար
իր համակիրները և սաները ծրագրած էին
նուազահանդէս մը ստորել։ Նուազահանդէ-

սին մասնակցութեան սիրայօժար՝ պատրաս-
տականութեամբ սոգորուած անհատներուն,
ինչպէս ամէն անձի, պարտք կ'իյնայ ուրեմն՝
երաժշտական այդ կազմակերպութեան տրուե-
լիք ուժին հետ չխնայել ո՛ր և է նիւթական
աշակցութիւն, կանգուն պահելու համար Պէր-
պէրեանի պէս արդիւնաւոր կրթական հաս-
տատութիւն մը։

★ Պէրպէրեան էֆ. իր կեանքը 600
ոսկիի ապահովագրած ըլլալով, այս գումարը
կը մնայ իր զուակներուն։

★ Թուրք մամուլը և տեղական ֆրան-
սերէն թերթերը իրաւատական փողեր նուի-
րած են Պէրպէրեան էֆ ի մահուան առիժով։

ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ «ՄԱՍԻՍ»

Պէրպէրեան էֆէնտիի մահուան մէջ պա-
րագայ մը, որ մասնաւորապէս կ'աղ ունի
Մասիսի հետ, և որ մեզի համար անմուռ-
նալի ու մանկաղին յիշատակ մը ըլլալուն
չափ կը յուզէ մեզ, սա է թէ, — և կ'ուզենք
հոս արձանագրել զայն՝ իբր յիշատակելի անցք
մը իր կեանքին մէջ, — ողբացեալ դաստիա-
րակին վերջին գրուածքը Մասիսի համար
յիշուած մըն է եղած, — շարունակութիւնը
իր Իմաստասիրական Դեմքերուն, «Սոկ-
րատ», զոր բաղդը պիտի ունենանք հրատա-
րակելու, — և իր վերջին ընթերցումը՝ նա'ն՝
Եղած է յօդուած մը Մասիսէն, նախորդ
շաբթուան խմբագրականը, ինչպէս հաղորդե-
ցին մեզ իր մօտը գտնուողներ։ Յարգելի գրա-
գէտին՝ մեր թերթին մասին ունեցած այս
գուրգուրանքը ու համակրանքը մասնաւոր
հանոյքով մը դիտելով՝ կ'արձանագրենք զայն
իրեն սիրական սիւնակներուն մէջ, իբր վա-
ւերագրութիւն մը՝ որ իր կեանքին պատմու-
թեանը մէջ անցնելու սահմանուած է։

ՓՈՒՍԱՆ ԾԱՂԿԵՊԱՆԻ

Ողբացեալ Ռէթէոս էֆ. Պէրպէրեանի յի-
շատակին, փոխան ծաղկեպսակի տարեկան
երեք օրինակ Մասիս կը նուիրենք՝ գուա-
ռային աղբատ վարժարաններու, յարգանքի
մը փափաքով յիշատակին անոր՝ որուն կեան-
քը նուիրում մը եղաւ կրթութեան և դաս-
տիարակութեան գործին։ Յաջորդով պիտի
ծանուցանենք այդ վարժարանները։

ԿԻՐԱԿԻ ՆՈՒԱԳԱՆՈՒԵՍԸ

Երաժշտական հմայիչ ցերեկոյթ մը եղաւ Ազգ. Հիւանդանոցի նպաստին տրուած կիրաւիի նուագահանդէսը, խուռն բազմութեան մը ներկայութեամբ, զոր կը կազմէին Հայ ընտրուած դասակարգի ղեմեր, որոնք կը լեցնէին Բըթի Շանի թատրոնը ամբողջովին, շքեղ արդուզարդերու, բոյրի ու ճանաչի թովիչ համայնապատկեր մը ձեւացնելով օժեակներուն ու գեղեցիկարկին մէջ: Այս տարուան նուագահանդէսը անտ'վ նաև աւելի սիրելի էր ու կըզաւ ունենալ փայլուն յաջողութիւն մը, որովհետև ամոր մէջ իրենց մասնակցութիւնը ունէին Հայ տաղանդներ, որոնց ներկայութիւնը օրջալի նորութիւն մըն էր, է'ր նոյնչափ բաղձանքը հանրութեան, ինչպէս արձագանգ եղած էինք ասկէ առաջ այդ գաղտփարին, որ ուրախ ենք հաստատելու թէ իրականացում կը գտնէր այդպէսով:

Նուագահանդէսը սկսաւ Բաղաբապետ Ռէշիտ Փաշայի մուտքին հետ սխումովը Համիտիէ քայլերգին, զոր եռաձայն երգեցին Կեդրոնական Վարժարանի եռաձայնի երգիչները, ընկերակցութեամբ դաշնակի՝ Սինանեանի կողմէ: Յետոյ նոյն խումբը երգեց Ֆրանսերէնէն «Հունձը» երգը, որուն իբր յաջորդութիւն՝ Սինանեան եղբայրները ըրին իրենց հաճելի մուտքը, նուագելու համար Ռայնպէրկէրէն «Թրիօ» մը: Սինանեան եղբայրները փայլուն նուագածութեամբ մը վաւերացուցին այն կարողութիւնը՝ որով կը ներկայանայ իրենց տաղանդը: Նոյն յաջորդութիւնը ձեռք բերին նաև անոնք, Յայտագիրին երկրորդ մասին մէջ, Ռայսիկէրէ «Թրիօ»ի մը նուագածութեամբ: Հայ արուեստագէտներու հաճելի ներկայութեան փայլը կրկնեց Օր. Գալանօգեան, ծանօթ Հայ երգչուհին՝ որ իր կերթ ու հրապուրիչ ձայնով երգեց Տօնիցէզլիէն ու Վերտիէն կտորներ, իր կարողութեանը արժանի յաջողութիւնով մը: Նուագահանդէսին մէջ յայտնութիւն մըն էր Տիկին Լը Գօրնէր-Մարէր, կիւսական գեղեցկութեամբ մանկամարդ արուեստագիտուհի մը, առաջին հանգիստցած Բարիզի Գօնսէպիմուռուի մրցումներուն մէջ,

որ իր իտալ շնորհներուն ու հրապուրներուն ընկերացուց հմայիչ նուագածութիւն մը տաւիզի (harpe) վրայ, երազային մեղեդիներով ու միամիջ խորհրդաւորութեամբ խռովիչ զգայութիւններու: Մեր նուագահանդէսներուն մէջ անձանթ մը չէ Հէկէ, տաղանդաւոր դաշնակահարը, որ Շօքէնէն, Պրահմէն ու տ'Ալպէրէն կտորներ նուագեց, զորին տէր արուեստագէտի մը յուզումը ու տաղանդը ղեկավար իր նուագածութիւններուն մէջ: Հանդէսը փակուեցաւ Չիլիկիւրեանի առաջնորդութեամբ կազմուած Կեդրոնականի երգիչ խումբին թուրքերէն երգովը, ձօնուած Վէն, Կայսեր:

Ընդհանուր առումով փայլուն ու զբաղանջալից հանձնի ցերեկոյթի մը տպաւորութիւնը թողուց նուագահանդէսը, պսակուելով օրինակելի յաջողութեամբ մը:

«Բիւզանդիոն»ի մէջ հրատարակուած յօդուած մը, կ'ըսէր թէ «Արքիէօ Սիւրօզը» լուծելի է արմատապէս՝ ինչպէս նաև Մուրիէի ելիքսրական գործիքով: Այդ սեւուրեան վրայ հիմնուելով՝ գրած էինք թէ ինչու ան չէ կիրարկուած Շաւսանձեան խանի վրայ: Մեր բարեկամ մեկ քանի հեղինակաւոր բժիշկներ, կը հաղորդեն մեզ թէ՝ իրենց՝ ինչպէս նոյն իսկ Տօֆր. Հիւշարի դաւանանքով՝ այդ հիւանդութիւնը լուծելի չէ՝ Մուրիէի գործիքով: Մենք նկատում մը չունենալով Տօֆր. Սիւրնուօֆի հետ, որուն հեղինակաւորութիւնը յարգողներէն ենք, այլ մեր նպատակը ըլլալով ծառայութիւն մը մասնացած ըլլալ հանուրեան, միտքերը շուտաւարանելով բժշկական այս հարցին շուրջը, յանուն ճշմարտութեան եւ անկողնակաւորութեան պատճառով կը նկատենք արձագանգ ըլլալ նաև այս կարծիքին, որ իր սեւակին մէջ համոզիչ է: Տօֆր. Հիւշար եւ իրեն հետ ուրիշներ կը յայտարարեն թէ պիտի ներկայանան իրենց լուծուի Մուրիէի գործիքով, թէ այդ մեքոսը ղեկ կանխահաս է եւ թէ ցարդ որ եւ է համոզիչ արդիւնք չէ ունեցած ան: Այս սեւութիւնն ալ ինքնին չղարդի հեղինակաւոր ըլլալէ, եւ պատճառ չկայ համոզուելու անոր: Մենք մասնագիտութեամբ բժիշկ չըլլալով՝ նպատակ ունեցած ենք մտնելու ինչպէս այս բնութեան մէջ կը հրատարակուենք ներկան:

Հիմնադիր. Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ: Արտատպ. ՏՕԲԹ. Ե. ՄԱՍԻՍ: Տպագր. ՍԱԳԱՆԱՆ

պիտի նպատէ իրենց զրական ու մտաւորական զարգացման: Ահաւասիկ անունները այդ ուշիմ տղոց, որոնք մէկ քանի վայրկեանի մէջ 60 դրշ. պատրաստեցին իրենց աղքատ քսակներէն: Պարոնայք Մուշեղ և եղբարք Յունոյեան, Դազար և իորէն Յարդոյեան, Սուրէն Գլինեան, Արմենակ Մալտարեան, Զարեհ Մուրատեան, Կրթասէր մէկը, Յովակիմ և Տիրան, Մ. Պուտաղեան, Ս. Մորոյեան, Ե. Մոսոյեան, Խ. Բոչոյեան, Յ. Մուրատեան, Ե. Գասպարեան: Պէտք է նկատի առնել որ զինղացի աշակերտի մը համար դրամ վճարելը դժուար է. իսկ ինչ որ ծախահարելի է անոնց ձեռնարկին յաջողութիւնն է. առաջին անգամն է որ Խնուսի դպրոցական աշակերտներուն մէջ դրոսիբական այս տեսակ եռանդ մը կը տեսնուի: Դաւառի միւս վարժարանները պէտք է օրինակ տանեն այս զեղջուկ տղոցմէն. Աքիսողոյո՛ւ Տ. Սարգսեան:» — Երզնկայէն կը գրեն մեղ թէ՛ գաւառացի ծանօթ ուսուցիչ Մամիկոն էֆ. Վարժապետեան դժբաղդութիւնը ունեցած է կորսնցնելու իր կողակիցը Տիկին Լիւսի: Յաւակցութիւններ՝ մեր յարգելի դորձակալին: — Խարքերդէն կը գրեն մեզ. — «Բարեկենդանի հինգշաբթին Թլկատինցիի Դպրոցին աշակերտները կրթական կեանքի վրայ յաջող թատերախաղ մը ներկայացուցին: Խաղն էր գաւառացի ծանօթ դրաղէտ Թլկատինցիի «Պօլսեցի Վարժապետ»ը: Յարգելի հեղինակը յաջողած է խիստ բնական կերպով նկարագրել և ներկայացնել Պօլսեցի վարժապետին ընթացքն ու գաւառի կեանքը: Տեղի նեղութեան պատճառով երկու անգամ ներկայացուցաւ, հինգշաբթի օրը էրիկմարդոց և յաջորդ օրն ալ կիներու համար: Զատիկին անգամ մըն ալ պիտի ներկայացուի. Համբարձում Գ. Թիւֆեմկճեան:»

Մեր վերջին հարցումին պատասխաններուն մէջ մրցանակի արժանի յաջող մը չըլլալով՝ յարմար դատած ենք միջակ բան մը չհրաշարակել:

Եզրիա Տէմիրճիպաշեանի Հայերէնէ-Ֆրանսերէն Բառարանը, որ գեղեցիկ աշխատութիւն մը և ամէն անհատի անհրաժեշտ Բառգիրք մըն է, կը գտնուի ծանօթ գրավաճառ Զարեհ էֆ. Թորոսեանի քով, (Պուլիս, Պահճէ Գարու, Բասըմ Փաշա Խան) որուն կրնան գիմել Բառարանին՝ ինչպէս գրեական ամէն տեսակ յանձնարարութիւններու համար, խղճամիտ գրավաճառի մը հետ դորձ ունեցած ըլլալու վստահութեամբ:

ԱՏԱՄԵԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ կը դարմանէ ամէն տեսակ ակռայի և լինտի հիւանդութիւնները, լիտած ակռաները կը լեցնէ՝ առողջ ակռաներու պէս երկար տտեն դորձածուելու պայմանով:

ԲՈՂՈՐՈՎԻՆ ԵՆՈՐ ՄԵԹՈՏՈՎ, նուրբ, ճաշկաւոր և դիմացկուն արուեստական ակռաներ կը պատրաստէ, բնականին ճիշդ նման:

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարմանատան մէջ, Բերա, Մեծ Բարձաք-Դարու, Թիւ 8, Կարօտ հիւանդները ձրի կը դարմանէ հինգշաբթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարմանատան մէջ:

Կիրակի օրերը ժամպորութեամբ կ'ընդունի:

ՊԱԼՔԱՆ

ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐԶԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՆԱ

Դրամագլուխ և պահեստ Թրանք 9,500,000

Վերապահովագրական

դրամագլուխ և պահեստ » 142,740,00

ՊԱԼՔԱՆ Ընկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն. , Կ. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ չափ գիւրամատչելի պայմաններով . իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիներով և պայմաններով օժտուած է . կը կատարէ խառն ապահովա- գրութիւն , ընտանեկան , մանուկներու , եւն. եւն. :

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ

Ղալաթիա, Տեօյջէ Սրիսնդ Պանքի Կից, Սինասուն Խան.

(2)

Հանգուցեալ Կարապետ էֆ. Իւթիւճեանի թարգմանած հետեւեալ հետաքրքրական գիրքերը կը ծախուին բոլոր հայ գրավաճառներու քով .

Կեդրոնասեղի Աշնեան գրատուն :

Ընտանեկան Գաղտնիքներ Յ հատոր

15 զրշ .

Արուարձանին Տղան Յ հատոր

15 զրշ .

Հանրակառքին Ոճիրը

5 զրշ .

Ամուսնութիւնք Բարիդու

5 զրշ .

Քաղաքական Տնտեսութիւն . Ժողէֆ Կաւնիէ

5 զրշ .

Գ. ԶՈՐԵԱՆ ԵՒ Ս. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

Գաւառացիներուն .— Եթէ կը փախաքիք որ տեսնուին Ձեր առեւ- տրական , կալուածական եւն. եւն. գործերը՝ փորձառու և վստահելի գործակատարի մը միջոցաւ , առիթէն օգտուելով զիմեցէք վերոյիշեալ հասցէին «Կ. Պոլիս Էթմէքճի Կուտ խան» ուր կը կատարուին ամէն կարգի վաճառքներու ինչպէս նաեւ կալուածներու զնման կամ վաճառ- ման յանձնարարութիւններ , ճշգրտահաշիւամբ , փութիւտութեամբ : Յաճախորդներու հաշւուն միանգամայն կը զնուին (ներածութիւն) եւրո- պական վաճառքներ , պատկանեալ նաւահանգիստը յանձնելի փոխար- ժէքով , ու կը վաճառուին (արտածութիւն) տեղական բերքեր՝ իր տեղը կամ այլուր յանձնելի պայմաններով : Խիստ գիւրամատչելի պայմաններ : Ընդարձակ տեղեկութեանց համար գիմել վերելի հասցէին :

Ք Օ Պ Ր Ա

Կենցաղագիտութեան էական պահանջներէն մէկն է կօշիկները ներկուած պտտիլ միշտ , ոչ թէ փո- դոցը ներկիկ տալով դանտնք , այլ տունէն դուրս ելած տուն իսկ՝ նա- լապէս անձամբ կամ նպատուհին միջոցով ներկիկ տալով : Այս նպա- տակին համար ամբողջ աշխարհի մէջ լաւագոյնը հռչակուած ներկն է՝ ՔՕՊՐԱՆ , զոր կարելի է գտնել ամէն տեղ :

ՄԱՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և դաւաճաններու համար տարեկան 60 դր.:
Արտասահմանի » » 11 փրանք:
Թղթատարութեան ծախքը մեր վրայ:
Բաժանորդները իրաւունք ունին անմատչելի մեր պարգեւները,
միշտ ձերիւրար: Թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ:
Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է:
Զհրատարակուած ձեռագիրները հա չեն դարձուիր:
Նամակ կամ որ և է դրութիւն ուղղել առ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

«ՄԱՍԻՍ» Ի Հասցէին

Գուրգուլու խան, քիւ 7, Կալարա, Կ. ՊՈԼԻՍ

در علم غلطه قورشونلی خانه نومرو ۷ «ماسيس» غزتيسی اداره فائزسي

Rédaction de la Revue "MASSIS,"

Nº. 7, Courchounlou Han, Galata.

CONSTANTINOPLE

ԼՈՅՍ ՏԵՍԱՄ Է ԿԻՆԸ ՀԵՂԻՆԱԿ ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՄԱՍՍՈՒԼԻՆ ԿԱՐԵՒՆԵՐԸ

Այս անգամ պատկանում ենք ամփոփում մը կը ներկայանայ ենով Արմէն: Այս զիւնով չէ որ պիտի հաստատէ՝ սա նեմահարսութիւնը քէ իր գրադասի, ննախոյզի կարողութիւններուն կը միացնէ վիպորի տաղանդը:

Կինը բացի իր գրական արժեքէն, խաղաղական տեսակետով ալ ուշագրաւ նորութիւններ կը պարունակէ: Ճաշակատու ու սիրուն հասար մըն է, որ փափաք կը ներշնչէ մէկ ծայրէն միւսը կարգալու:

Ենով Արմէն (Կինը) մէջ կ'զգուանայ այն միւս գրականութեան, կ'զգուանայ տնաւու մեծ սենեակներու վարագոյրներուն ետին դալկացող կեանքէն: Իր ուզածը դուրսի կեանքն է, Կեանքը, գլխաւորով, արեւին տակինը, իր յորդ ալիքներէն մէջ: Այս տես, իր մօտ փառաբանող մը կայ, մարդկային սկզբնական վաղնջական բնագոյններուն, զոր երկինք կը հանէ, զվազում մը: Ենով Արմէն յատկապէս sensualiste, զգայական կամ զգայապաշտ է, առանց որ եւ է անյարկեանքեան:

Անուշտ ամէն գրաւոր պիտի փափաքի ունենայ ենով Արմէնի այս հրահրանքները, Կինը, գրական գեղեցիկ վայելք մը բոլորովն իր հոգին:

Կինը, հեղինակին գրչի այդ առաջնէկ զուակը, նորութիւն մըն է իբր յղացում:

Կինը իր գրական արժանիքին կը միացնէ խաղաղութիւն մը հիմնապէս առօրինիք ու բոլորովն նոր նաշակով, որ կը յաւակնէ Կինը համակրելի հեղինակը:

Երեսօտարդ հեղինակը, որուն գրումները աշխարհ հանդիմանով կը կարգաւորին օրաքերքերն ու պարբերական հանդէսներն մէջ, այս անգամ իր մտածումները խաղաղապէս է տիրուն ու կոկիկ հասարի մը մէջ, որուն խաղաղութիւնը, բոլորքին ազնուութիւնը եւ գեղեցիկ նաշակը հանդիմանով կը պարգեւէ ընթերցողին ունենալու անկէ հաս մը: Ձեռնապէս խանձարարելի է այս գործիկ հասարը:

Իր ընդհանուր հանգամանակով Կինը կարողացուելու արժանի զիւն մըն է յաւագոյն աշխատութիւններէն հեղինակին:

Գին 5 դրու: Կը գտնուի ամէն գրականատի քով: